ԱՐԵՒԵԼԵԱՆ
ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

1873

ՅՈՒՆԻՍ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԿՕՏՆԵՒԱՆ ՇԱՐՈՒՄՆ Ի ԶՈՒՏՈՒԹԻՒՆ
ԱՆԽԾԻՒ, ՊՏԱՒ!
ՐՆՑԵՆԻՐ
ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆ
ՈՂՔ ԶԱՐԻՊԻ ՍՍԵՑԻՍԻ,
ՓԱՂԱՔԱՑԻԱՆ
ՊՐԵՆՍԻՍԻ ԱԶԳԵՑԻՆ ԱՌՈՂՔԸ
ՌՍԼ ԵՒ ԱՑԼՔ
ԻՂԱՆՕՒ

ԶՄԻՒՌԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԼԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

Գ. ՏԱՐԻ 1873 ՅՈՒՆԻՍ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ Ի ՀՈՒԻՑԵՐԻՆ

ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ՝ Հուիցերիոյ կրօնական շարժման վրայ պատուա-
կան Ա. Մ-ոյ տեղեկութիւն մի հաղորդելով՝ շատ դառն և ծանր պարտ-
ուութիւն ունիմ կատարել այս անգամ։ Թող Երուսաղեմի վարդա-
պետները միմեանց դլուխը ջարդեն և մօրուքը քաղեն։ այս սովորական
բան է։ բայց ով կարող էր կարծել թէ Հուիցերիոյ պէս աղատ երկրի
մէջ ևս կարող էին դեռ կրօնական ցցուելի վէճեր ծագիլ։ Արդարև
դառն է տեսնել, որ աշխարհիս ամենակիրթ աղգերն անդամ տակաւին

ՀԵՆ հասած լուսաւորութեան այն աստիճանին, որ առ միշտ աղատուէին այս մահաբեր կռիւներէն և քրիստոնէական եղբայրսիրութեան օրինակ ցոյց տային աշխարհին։ Ցակաւին երէկ երկու հզօր ազգեր, որք յառաջադիմութեան կարապետ կ'համարուէին, իրարու դէմ յարձակելով պատրաստ էին իսպառ մորթել զմիմեանս. հապա թէ վերջացաւ նոցա զարհուրելի դժուութիւնը և հապա թէ աշխարհ հանդիստ առաւ այն ահեղ փոթորկէն — և աւասիկ այսօր նոր և դուցէ առաւել սասսիկ պատերազմի բոմբիւն մի կ'թնդայ բովանդակ Եւրոպայի մէջ։ — Եւ ոչ ոք են սորա պատճառը։

Նոքա որք եղած են և են միշտ ամենայն չարութեանց պատճառ — Ժեղուիթներն և Պապն իր եպիսկոպոսներով և բոլոր դիւային բանակով հանդերձ։

Ի՞նչ կ'ուզեն սորա։

Կ'ուզեն վերսին կաշկանդել աղգ և ազգինք և նորէն տիրապետել տիեզերաց վրայ։ Այս սև ապլուս դահիճները կատաղելով որ մինչև դարեան խաւարն արդէն կ'փարատի, որ առաջապահ զաւազանին հլու աղգերն այլ ևս անրան ոչխարներ չեն, այլ բանաւոր մարդ դարձեր են՝ դժոխային միջոցներով կ'ուզեն արդ սպանել մարդկային կամքի ազատութիւնը և մոռածելու երկնաւոր պարգևը։ Նոքա կարօտանօք կը յիշեն խաւարչտին հնութեան այն օրերը, երբ 'ի ֆառա միոյն Աստուծոյ բիւրաւոր մարդիկ մահու կ'մատնէին, կրօնական պատերազմներով զաշխարհ կ'աւերէին, հերետիկոսաց դատաստաններով ամէն տեղ սարսափ կ'ազդէին, երբ հաւատաքննութեան սատանայական գործիքներով զանմեղ մարդիկ չարաչար կ'խոշտանգէին և ապա թէ խարոյկներու վրայ կենդանւոյն կ'այրէին և այս ամենը 'ի ֆառա միոյն Աստուծոյ, որ կարծես թէ արիւնաւաշտ մարդ էր և ոչ թէ բարերարութ հայր ամենայն մարդոց։ Այո, ժեղուիթներն կ'սենչան յետ կոչել այն քստմնելի օրերը, բայց 'ի զուր։ Մարդկային սպատուոյ և իրաւանց դիտակցութիւնը և դարուս լուսաւոր գաղափարները թոյլ չեն տար նոցա հանիլ իրենց վատթար նպատակին և վաղ թէ ուշ կ'խորտակեն նոցա բոլոր չար մեքենայութիւնքը։ Խաւարեալ աղգերու մէջ թերևս յաջողին հունձեր հնձելու, բայց Գերմանիոյ և Զուիցերիոյ պէս յառաջադէմ երկիրներու մէջ արդէն հասեր է նոցա իշխանութեան օրհասական ժամը, և ժեղուիթներու ուրիշ բան չմնար, եթէ ոչ հաւաքել փէշերն և շուտով դուրս փախչիլ այս տեղերէն։

Նոքա արդէն վռնտուեցան Գերմանիայէն, նոյնը կ'ուզէ անել և

Զուիցերիան։ Զուիցերիոյ մէջ քաղաք մը չկայ այժմ, ուր պատերազմ չքարոզուէր անոխալական սպայի և ժեղուիթներու նենգամիտ խարդաւանութեանց դէմ։ Գրեթէ ամէն տեղ մարդաշատ ժողովներ կ'հաւանքուին և ազատութեան, մարդասիրութեան, հայրենասիրութեան մտքերով լի և Ճշմարիտ կրօնական զգացմամբ ողևորեալ Ճառեր կ'ասուին ընդդէմ պապութեան. այսպէս Սօլօթուրն, Պէռն, Ցուրիխ, Արկաու, և վերջապէս Ժէնէվ, ուր հակահռոմէական շարժման պարագլուխն է երևելին Ցակինթոս։

Ինձ անկարելի է թարգմանել այս անթիւ Ճառերը և կամ դէթ սակաւուք տեղեկութիւն տալ նոցա հարուստ բովանդակութեան վրայ։ Բաւական կ'համարիմ թարգմանել միայն մի երկուքը զոր ես ինքս լսած եմ, համոզուած դոլով որ հայ ընթերցողք այս սակաւ Ճառերէն ևս կարող կ'լինին դէթ մասամբ իւրք պարզ դաղափար մի կազմել Զուիցերիոյ կրօնական շարժման և սորա վերջնական նպատակի վրայ։ Բայց ներողութիւն կ'խնդրեմ որ գրիչս խսպառ անզօր է հայերէն թարգմանութեամբ արտայայտելու Լանկէի և Քեզլէրի հրաբորբոք խօսքերը, որք ասես թէ դերբնական ուժով մի հաղարաւոր ունկնդրաց սիրտն ու միտքը կ'վառէին։

Գ. Լանկէն իր աղատ մտքերով, հաղուագիւտ Ճարտարախօսութեամբ և ուսումնական դրուածներով ծանօթ երիտասարդ քահանայ մի է 'ի Ցիւրիխ։ Լրագիրներու մէջ նորա աղատ ատենախօսութիւնը բաւականին համառօտուած էր. ես կ'թարգմանեմ զայն Դաշ (Der Bund) անուն լրագրէն։

«Եւրոպական հասարակութեան մէջ անակնկալ մրրիկ մի ելաւ, որ հետզհետէ համաշխարհական նշանակութիւն ստանալու վրայ է։ Արդի հասարակութիւնը՝ նոր բան մի շինելու եռանդով բոլորովին իր գործին զբաղեալ՝ երազած անդամ չէր թէ միջնադարեան ոգին իր եպիսկոպոսներով, սուրբերով և հրաշքներով օր մի յանկարծ մեր առջևն կ'ելնէ և իրօք դատ կ'բանայ մեր նոր կեանքի գոյութեան իրաւանց դէմ։ Երբ այս միջին դարերու ոգին այնքան բեղուն կ'համալէր գինքը, որ անարդ յաչ-ինէ-ն կ'քարոզէր աշխարհի՝ քրիստոնէական սակաւին չէին հասկնար բանի էութիւնը. ուստի անցան խնդրոյ կարգին։ Երբ այնուհետև հանդէս եկան ալլապուռան և Էնցիկլոն, որով մի՛ջին դարերու ոգին կ'սպառնար մեկ անդամն ջնջել պիտութեան, եկեղեցոյ և գիտութեանց հարուստ արդիւնքը՝ ծիծաղ մի էր որ լսուեցաւ ամէն տեղ։ Ինչպէս կարելի է, կ'ըսէին մարդիկ զարմանալով, որ երբ

քեմն իր իմաստութեամբ աշխարհի վրայ տիրապետող զօրութիւն մի յանկարծ այսպէս յիմարանայ և 84 նղովք թափէ մեր գլխուն։ Երբ պասը սկսաւ պատրաստութիւն տեսնել ժողովի մը համար, որոյ շնորհէն Եւրոպան երեք դարերէ 'ի վեր թափուր մնացած էր, հասարակային մամուլը մոռէ անդամ չանցուց որ և է կարևորութիւն տալու նորան։ բայց երբ վերջապէս եպիսկոպոսունք անսխալականութեան վարդապետութիւնը զրպաններն դրած յետ եկան Հռոմէն, ամէն տեղ պատերազմ բրդաւ։ Հազիւ թէ երկու տարի անցաւ այնուհետև և աւասիկ առաւել ևս զայրացաւ կռիւը և արդէն քանի մի աղուեր կաշկանդեալ ընկան հզօր թշնամոյ ոտքերու տակ։ Ֆրանսան ձգեց իր պաշտութիւնը անդրալեռնականութեան երախի մէջ, Պելժիա պատուէր կ'ընդունի Մէքէլնի եպիսկոպոսէն։ Իսկ այլուրեք, որպէս 'ի Բրուսիա, արքապէս դէմ կ'ելնեն ոսոխին և այն անձը, որ առաջ միայն պահպանողական շահերու պաշտպան էր՝ Պիսմարք՝ հզօր բաղկով դուրս կը վանտէ ժեզուիթները և նորան կ'աջակցի լուսաւորութեան նախարարն՝ տոքտոր Ֆալք։ Զուիցերիոյ մէջ ևս եպիսկոպոսներու խոյրերն անսխալապէս յերկիր գլորեցան և Պեռնի արջը* թաթի մէկ հարուածով սաստ արկաւ 97 տէրտէրներ, որք կ'ընդվզէին պետութեան դէմ։

Խաղն արդէն սկսուեր է, բայց թէ ուր կ'տանի — ոչ ոք գիտէ։ Մեզ պէտք է միայն լաւ ճանաչել մեր ոսոխները և քաջ գիտնալ ընտրել պարտերու միջոցները, զորս կ'ուսուցանէ մեզ պատմութիւնը, միայն թէ ուզենք օգուտ քաղել նորա դասերէն։

450 տարի առաջ կ'կարծուէր թէ արդէն հասեր է քաթոլիկութեան յետին շունչը։ Գերմանիոյ բոլոր աղուերը կ'դիմէին դէպի Ռէֆորմասիոն։ Պակայն ռէֆորմասիոնի պահանջմունքը շատ մեծ էին, անյեալի և ներկայի ճեղքը խիստ լայն էր։ Ռէֆորմի ոգին բացէ 'ի բաց անսիրդերական էր։ նա խարան կ'մերժէր քահանայութիւնը և Աստուծոյ ու մարդկան մէջ այլ միջնորդ չդնելով բոլորովին անսէտ կը համարէր ամէն միս միջնորդները, որպիսի են քահանայք յեկեղի և սուրբք 'ի յերկինս։ միանգամայն կ'հերքէր սոցա գործերն ու պաշտօնը և իւրաքանչիւր անհատի իրաւունք կ'տար անմիջապէս հաղորդակցելու ընդ Աստուծոյ։ Հոգևորականք այլ ևս իշխանութիւն չունէին և ամէն մարդ աղատ համոզմամբ ինքն էր միայն դատաւոր իր հաւատոյն։

*Զուիցերիոյ դաշնակցութեան կեդրոնական խորհուրդը Պեռն կնոտի եւ արջը Պեռն քանթոնի դրոշանշանն է (armoiries): Փ. Պ.

Եթէ այս ուսումն խստիւ իրագործուէր — այնուհետև սէրտերն չպիտի մնային աշխարհիս վրայ։ Ռէֆորմասիոնը կ'պահանջէր, որ մանուկը յանկարծ հասուն մարդ քարոզուի։ Այս անկարելի բան մի էր, ուստի նոյն իսկ բողոքականներու մէջ անդամ խստաւ թօշնեցաւ նոր վարդապետութիւնը և անթիւ մարդիկ նորէն անցան հնոյն կողմը։

Այսպիսով պապականութիւնը չէ թէ միայն դերծաւ վտանգէն — ոչ, այլ թէև արտաքուստ ՝ի սեպեալ, բայց ՝ի ներքուստ նոր ոյժ առած դուրս ելաւ պատերազմէն։ Քաթոլիկութիւնը ռէֆորմասիոնէն ետքը բոլորովին ուրիշ բան մի դարձաւ, քան ինչ որ էր անկից առաջ։ Պետրոսի աթոռին վրայ գլխովին ուրիշ մարդիկ բազմեցան այժմ, որք բնաւ նմանութիւն չունէին իրենց նախորդաց հետ։ Այլ ևս չէին երեւեր Ցուլիոսներ և Լէոններ, որք ուրախ զօրականներով կ'լեցրէին պապի տրբունիքն և ասիական փարթամութեան մէջ կ'լողային։ Ռէֆորմասիոնէն ետև կ'բաղմի յաթոռ պապութեան Պօղոս Գ. անուն մեայլադէմ, դիւային սրտով մարդ մի, որոյ խրոխտ աչքերէն իր գազանային զործերով և օրիորդաֆէյով հուչակուած վայրագ Ալպան անդամ կ'զարհուրէր։ Այս պապը հոգւով և մարմնով նորոգեց քաթոլիկական եկեղեցին և այն տեսակ եռանդ մի շնչեց նորա մէջ, որ այնուհետև կարող էր նուաճելով յարձակուիլ բողոքական երկիրներու դէմ։ Լիւթէրի քարոզած կրօնական խորասուզումը յինքեանս այժմ քաթոլիկութեան կողմն անցաւ։

Քաթոլիկական եկեղեցին դուսաւ ՝ի դէպ ժամու զործիք մի որ պէտք էր իրեն — ժեզուիթները։ Սոցա երեքհարիւրամեայ զործունէութենէն ետքը կաթոլիկութիւնն և ժեզուիթութիւնը իրարու հետ սերտ զուգուելով՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ իրարմէ բնաւ անտարբեր մէկ միութիւն կազմեցին։ Լոյոլան դեռ ինքը չպիտէր, թէ ուր պիտի մղուէր իր եռանդի ուժգին թափէն, երբ Հռոմ գնալով զոհ մատուցանէ իր անձը պապի տարապայման հաճոյքին. սակայն շատով յետոյ ինչ զուգաւ նորա և նորա ժեզուիթներու խորհուրդը, որ էր վերականգնել պապի ամենազօր իշխանութիւնը և նորէն տարածել զայն բոլոր երկիրներու վրայ։ Սոյն նպատակին հասնելու համար ամենայն ինչ զոհեցին նոքա, արդարութիւն, խղճմտութիւն, բարոյականութիւն, ամենայն ինչ որ սուրբ է մարդուս, և գրեթէ նոյն իսկ Աստուածաստութիւնը։ Ամէն բան զոհելով նոքա դարձան լիաբոր։ Պապան գործել քաղաքական քեմի վրայ և խոստովանութեան մատուռի մէջ — անդ ապաստի, ասա ներկայի համար, և փառայեղ ժամասացութեամբ հմայեցին ազգերու

աչքը։ Վարպետութեամբ հնարուած հաղարաւոր կամուրջներով ծածկեցին դարերէ 'ի վեր իրարմէ զատեալ տարերայց փոսը և հիմնեցին վարժարաններ, որք հաչակուեցան բոլոր աշխարհ, զի բողբականաց գիտնականութիւնը ստիպած էր գնոսա, որ ինքեանք ևս ուսման մէջ դեպերէին։ Ժեղուիթներու միաբանութեան ներքին կազմութիւնը տիպար դարձաւ եկեղեցւոյ համար. որպէս միաբանութեան զօրապետն և յետին նորընծայն սերտ կ'հաղորդակցին իրարու հետ և որպէս մին շղթայի ամենավերջին օղակն է և միւսը՝ սարին, նոյնպէս լինելու էր և եկեղեցւոյ մէջ, պապը սերտ յարակցութիւն ունենալու էր իւրաքանչիւրի հետ, այսինքն ամենայն ոք պարտ էր թաւալիլ յոտս նորա։

Ա.յսպիսի քաջութեամբ և այս տեսակ եռանդուն միաբանութեամբ ձեռնարկուած յանդուգն միտք մի անշուշտ պարտ էր յաջողութիւն գտնել։ Եւ ժեղուիթներն արդարև գտան յաջողութիւն. նոքա ամրացուցին հռոմէական կաթոլիկութիւնը, ուր որ սա արդէն էր, և վանեցին բողբականութիւնը միւս երկիրներէն։ Սակայն այս երեք դարուց մէջ ժեղուիթութեան և նոյն բանը վիճակուեցաւ, ինչ որ վիճակուեր է արդէն մարդկային ոգւոյ ազատ յառաջադիմութեան դէմ ուղղուած և բոլոր միւս դարերուն։ Հոս և հոն յաջողեցան իրաւ, բայց և ուժգին հարուածներ կրեցին այլուրեք, և այն քարը զոր անասելի դժուարութեամբ ջան կ'գնէին բարձրացրնել՝ կատարին հասածին պէս՝ նորէն կ'ինկնէր զէպի վար, և չնայելով նոցա ջերմեռանդ փափաքին — լո թերական քարոզի արմատը չորցրնելու — երեսնամեայ պատերազմը դարձեալ վերջացաւ բողբականութեան և քաթոլիկութեան հաւասար իրաւունքներով։

Երեսնամեայ պատերազմն եռքը հղօր ոսոխ մի եկաւ ժեղուիթութեան դէմ, ոսոխ մի որ անշուշտ փշրելու է նորա ատամները։ Սա էր նոր ուղղութիւն մի, որոյ սերմերն առաջին անգամ Անգլիայէն դուրս եկան և հալուստ պատուղներ տուին Սրինոզայի, Լէյպնիցի և Թոմազիուսի փիլիսոփայութեան մէջ։ Սերմերը յանեց նախ Անգլիան, Ֆրանսան տարածեց զանոնք բոլոր աշխարհ — հանգէս եկան Թուաներ, Վոլթեռներ։ Ա.յս փիլիսոփաներն կ'գրեն զիւրմբռնելի պարզ ոճով, համարձակ կ'քարոզեն բանականութեան ոսնակոխ եղած իրաւունքը. նոցա գրքերը կ'պրուին, բայց ինքեանք կ'մնան մարդկութեան ուսնելի ախոյեանք։ Ամէն ոք կ'ուզէ որ իր սրտի մէջ նոցա քարոզը, ամէն ոք կ'փութայ իրագործել զայն և ամբողջ ազգերու կեանքը նոցա ազատ վարդապետութեամբ կ'վերանորոգի։ Ցիշենք միայն Աւստրիոյ կայսրն

Յովսէփ Բ. և զմեծն Գրեգորիկոս Թագաւորն Բրուսիոյ։ Գերմանիան կամայուկ կ'զրթի իր երկարաւև քնէն. Լեսսինգի, Վինքէլմանի խորհրդաստ դաղափարները երթալով վերջապես թիւն կ'առնուն Գանթի ամենազօր փիլիսոփայութեան մէջ, որ առ միշտ կ'վերականգնէ մարդկային խելքի իշխանութիւնը։ Եկեղեցոյ քարոզած կրօնը սատ կ'հանչակուի և այս նոր մտքերու անդիմադրելի զօրութեանը հնազանդելով Քրիստոս ԺԴ. աղաստատիտ պապը — առաջին պապը որ չէր նզովէր, այլ կ'օրհնէր — 1773 թուականին — նշանաւոր թիւ, յաւիտեան բարձեալ կ'քարոզէ ժողովրդոց միաբանութիւնը։

Այս տեսակ առոյգ վերանորոգութեան մէջ էր Եւրոպան, երբ վրայ հասաւ Ֆրանսական յեղափոխութիւնը և, ինչպէս ասեմ, մոսամբ օդնեց և մասամբ ջնջեց նորան։ Եկեղեցական պետութեան (États de l'Église) ջնջումը յեղափոխութեան բարի պտուղն էր, բայց քրիստոնէական բարձումը ծայրայեղ զրկանք մի էր արդարութեան դէմ — այս տեղ խելքը սրսի պահանջմանց կ'մղոցէ։ Եւ զի ամէն բան որ անժամ չափազանցութեամբ կ'հերքուի նոյն ատեն կ'հերքի, ուստի շուտափոյթ ամբոխմամբ դորուած պապութիւնն ևս նոր 'ի նորոյ հաստատեցաւ և Լոյոլայի մտայոյզ երիտասարդ դաստորները զեկավար ընտրեցին գրիսատնէութիւնը և կամ առ ևս ասել, զպապութիւնը, որոշելով որ սա լինելու էր յետ այնորիկ պահպանիչ կրօնական ձեռերու, իսկ ինքեանք՝ սպասաւորք եկեղեցոյ։

Թէ ի՞նչ էր այս իշխանութիւնը քրիստոնէութիւնը իւրքին յելեան երաւ Վիննայի դեսպանաժողովի մէջ, ուր այր զրնկեր խաբել և յոշտեալ կը ջանար. քրիստոնէութիւնը նոցա համար ոչ այլ ինչ էր, բայց եթէ սեբաղաշնակցութիւն սէրտերու և թագաւորներու առ 'ի ձնշումն աղաստութեան ազգայ։ Դիւանապետներու կարծիքով կրօնը մեղ անշուշտ հարկաւոր է, կ'ասէին թագաւորք, և միւս կողմէն Պիոս Է. պապն իր աբեղայից հետ կ'պնդէր թէ կրօնը վերականգնելու համար անհրաժեշտ պէտք էր նորէն հաստատել պապի աշխարհական իշխանութիւնը, նորէն կոչել 'ի կեանս դերմանացոյ ազգի հին սրբազան հռոմական պետութիւնը, նորէն մոցընել տասանորդը, նորէն յարուցանել հաւատաքննութիւնը, նորէն կանգնել եկեղեցական իշխանութեան դահիկն, և այլն և այլն։ Այնուհետև, կ'ասէին նոքա, կրօնը նորէն կ'ծաղկի սրտերու մէջ և այժմայ ասպականեալ սերնդի տեղ յառաջ կ'գայ նոր սերունդ մի լի հաւատով և զօրութեամբ։ Այս մարդոց համար քրիստոնէութիւնը պատրուակ մի էր, դիմակ մի իրենց չար խորհուրդները

աքօղերու, և կամ լոկ միջոց մի հոգևորական դասաղանի բռնութիւնը դօրացնելու։ «Այսպիսով միայն կ'վերադառնան, կ'դրէր ժեղուիթ մի։ Թագա որայ և հռոմական դահի միաբանութեան այն դեղեցիկ օրերը, երբ զԱստուծոյն՝ Աստուծոյ կ'աբուէր և զկայսերն՝ կայսեր։»

Սոն յաջաքերու թեանց մէջ դրուած էր յաջորդ տասն տարիներու սբառնութեան բանալին։ Պիոս Է։ վերսին հաստատեց ժեղուիթներու կարգը և Սեթերնիկ հզօր բաղկով պաշտպանեց ընտա։ Սակայն Ֆրանսական յեղափոխութենէն ծագած կրթութեան և լուսաւորութեան նոր ոգին կարող չէր այնպէս շուտ մոռնալ իր մանկութեան սիրուն երազները. պետութենէն և եկեղեցիէն 'ի բաց մերժուած՝ նա ընկաւ դրքերու վրայ և բնական գիտութեանց մշակութեամբ նոր աշխարհատեսութիւն մի պատրաստեց։ Այս աշխարհատեսութիւնը մարդկութեան մէջ արմատ արձակելով՝ փաստեղ յաղթանակ տուեց 1848 թուականին։ Բայց աղատութեան ոգին այս անգամ ևս յետ մղուեցաւ; այս անգամ ևս եկեղեցին ու պետութիւնը, եկեղեցական ու պետական բռնակալութիւնը միացան իրարու հետ և Հնչիցին ընտա։ Իր աթոռը կղերին տուած երդման վրայ հաստատելով Նափոլէօն ասաց թէ՝ «Կայսերական Գրանսան քաթոլիկ է։» Խօսք մի, զոր նա աւելի լաւ կատարեց, քան թէ միւս խօսքը թէ՝ «Կայսրութիւնը խաղաղութիւն է։» Նորա կատարեալ թեան հովանոյն տակ առատ հունձ հնձեցին ժեղուիթք. ժեղուիթք ստացան ամէն բան՝ կանայք, մանկունք, չինականք, և ինքնիշխան տէր դարձան Գրանսայի մէջ։

Բրուսիան ևս մաղով չափ չէր գանաղանուէր Գրանսայէն. Վիլհելմ Դ. Շնորհալի թագաւորը նորոգութիւն չէր սիրեր. իսկ այժմեայ Վիլհելմ, յանձուր բաղմելու ժամանակ թէև ասեր էր որ կ'ցանկայ «վերջ դնել կեղծաւորներու իշխանութեանը» սակայն խօսքը խօսք մնաց և եպիսկոպոսներու ձեռքը աղատ. սոքա աղատ էին բռնահարել եկեղեցական օրէնքով չիատարուած ամուսնութիւնքը, տիրապետել վարժարանի վրայ և անկել նոր սերնդի ընդունակ սրտի մէջ ամենայն ինչ ազնիւ ու բարի բան խեղդող վատութեան սերմեր։ Կարճ ասել՝ նոցա աղահմատներն ամէն տեղ կ'հասնէին։ Մինչև 1848 վանական կարգերը գրեթէ ոչ մի նշանակութիւն չունէին Բրուսիոյ մէջ. իսկ այս թուականէն ետև կարգերը սունկի պէս կ'աճին դեսնէն։ 1848ին Բրուսիան կը հաշուէր 59 վանք, 1864ին արդէն 241, իսկ 1866ին գրեթէ կէս հազար, այսինքն 481 վանք։

Մեր ազատամիտները ստէպ ինքեանք ևս չդիտեն իրենց արածը։

այլ հռոմէական եկեղեցին քաջգիտէ թէ ինչ կ'ընէ աղատութիւն գրելով իր գրոշակի վրայ։ Եթէ այսպէս էր Բրուսիոյ կանաչ ծառը, ուրեմն ինչպէս էր սպասել չորացեալ փայտերէն։ Աւստրիան կ'թաւալէր հռոմէական սպասի ոտքերու տակ, նոյնպէս Պատէն և Վիւրթէմպերկ։ Սակայն ազգերու ոգին մարած չէր։

Արդ՝ միթէ զարմանալու է որ հռոմէական կղերը այս գլխաւոր երկիրներու մէջ յաղթութիւն ստանալէն զինի ևս քան զևս խրոխտալ սկսաւ ու վեր տնկեց իւր վիզը։ Պարտինք արդեօք զարմանալ որ անսխալականք նոր աստուածութիւն մի մտցուցին յաշխարհ երկնային դշխոյ մի հնարելով, որ 'ի յանդունդս և 'ի բարձունս հաւատացելոց համար միջնաբական թղթեր կ'բերէ երկնքէն. պարտինք արդեօք զարմանալ որ կղերը հանապազ յառաջ կ'գիմէ իւր էնցիկլիոյով, սիլլաբոսով և ոսնակոխ կ'ընէ աղատութեան դառն քրտամբ վաստակեալ մրցանակները, որ սպասն իւր վերջին յաղթանակը, կամիմ ասել, ան սխալականութիւնը քարոզելով՝ ազգ և ազգինք և իշխանք ստրուկ կ'ուզէ դարձնել իւր սրբութեան առջև։ Աւասիկ ժեղուիթութեան երեք դարեան գործի արդիւնքը. արդեօք ներելի է անտարբեր մնալ այսպիսի թշնամոյ դէմ։ — Ոչ, և գոհութիւն Աստուծոյ որ արդի պետութիւնը իւր պաշտօնը ուղիղ ըմբռնելով՝ արդէն սկսեր է գործել նորա դէմ։

Տեսանենք թէ ինչ միջոցներ կարող է բանեցընել արդի պետութիւնը այն թշնամոյ ձեռքէն աղատուելու համար։ Օրինակ առնենք Բրուսիան. սա ամենէն յառաջ քայլեց և շատ բան, մեծ բան, վճռական բան մի գործեց, այն է վանտեց ժեղուիթները պետութեան մէջէն։ Եթէ կան տակաւին տեսակ մի մարդիկ, որք աղատամիտ կ'անուանեն զիրենք, բայց և այնպէս կ'բողոքեն Բրուսիոյ ընթացքին դէմ, սորա միակ պատճառը դաղափարներու շփոթութիւնն է։ Նախ կ'ըսեն. ժեղուիթները լոկ ընկերութիւն մի, միայն թէ կրօնական ընկերութիւն մի կ'կազմեն, ուստի և պարտին վայելել ընկերութեանց վերաբերեալ իրաւունքը։ Բայց սկսեալ այն օրէն երբ կրօն կայ երկրիս վրայ երբէք այնքան վատութիւնք չգործուեցան յանուն կրօնի, որքան ժեղուիթներէն, որոյ համար կրօնը միշտ եղած էր մարդ խաբելու սուտ դիմակ. դեռ երբէք կրօնն այնպէս հայհոյուած չէր որպէս յետ այնորիկ երբ աշխարհ եկան այս սուտակասպաս աղուէսները։ Նոյն իսկ բարեպաշտ քաթոլիկներն անգամ կ'խոստովանին, որ ժեղուիթներու բարոյականութիւնը ամէն տեսակ չարութեանց վարժարան մի է։ Նոցա նպա-

տակն ու վիտքը կրօն չէ, այլ իշխանութիւն և զօրութիւն. ինքիրն այս է թէ ովէ գերը։ Օտարերկրեայ տիրապետ մի — պապը — կ'ուզէ որ միայն ինքն լինի վճռահատող դատաւոր քաղաքական և եկեղեցական գործերու մէջ։ Եւ պետութիւնը չունի՞ միթէ իրաւունք՝ առանց վնասելու կրօնին՝ աքսորել պետութեան հիմքը քայքայող ընկերութիւն մի, որ հաւատարմութեան երդում կ'տայ այն օտարերկրեայ տիրապետին և իր բոլոր զօրութեամբ յօդուտ նորա կ'գործէ։

Զուիցերիոյ դաշնակցութիւնը դուրս վանեց քաղաքացի մի, այն, զուիցերական քաղաքացի մի — Զիրմիլը, որ հինաւուրց դաշնակրի բռնի եղծմամբ եպիսկոպոսական վիճակ մի կ'ուզէր սեփականել ինքեան. երբ այս դաշնակրի պահանջները ընդդիմացան նորան՝ նա դիմեց պապի օգնութեանը։ Այժմ դարձեալ կ'աղաղակեն թէ մեր կառավարութեան արածը բռնութիւն էր. դարձեալ այնքան հաչիւն և որոյ համար — եպիսկոպոսական վեղարի մի համար։ Մարդ մի որ հակառակելով իր երկրին օտար իշխանի մի առաւել կ'հնազանդի, քան թէ իր ազգի օրէնքին, իսպառ արժանի է աքսորման։ Երևակայեցէք օտար պետութեան հիւպատոս մի, որ և զուիցերացի լինէր ազգաւ. երևակայեցէք օտար հիւպատոսը տար աշխարհի օրէնք կ'ջանայ բանեցընել Զուիցերիոյ մէջ։ Միթէ պատելու իրաւունք ունի՞նք ինա՝ այս օտար պետութեան հիւպատոսը, որ իր երկրի օրէնքը ուրանալով՝ միայն օտարինը կ'ուզէ ճանաչել։ — Ոչ, ոչերբէք, այլ պարտինք արտաքսել զնա, այս է միակ միջոցը նորա դէմ։ Քանի որ դու հիւպատոս ես՝ դուրս կորիր մեր երկրէն. իսկ երբ մերկանաս պաշտօնդ՝ կարող ես նորէն յետ դալ իբրև զուիցերական քաղաքացի, և ոչ ոք չարդիլեր քեզ վայելել քաղաքական իրաւունքդ։

Պետութեան դէմ տրտնջելու փոխարէն պէտք է ընդհակառակն ուրախանալ, որ նա վերջապէս աչքը բանալով՝ սկսեր է իրօք կատարել իւր պաշտօնը։ Պետութիւնը ցարդ թոյլ կ'տար որ երկու օրէնք իշխեն իր մէջ՝ եկեղեցական (droit canon) և աղգային։ Պետութիւնը թոյլ կ'տայ խառն ամուսնութիւնք, իսկ եկեղեցական օրէնքը կ'պահանջէ քաթոլիկական ամուսնութիւն — ինչ շփոթ վիճակ։ Պետութիւնն իւր օրէնքով կ'ընդունի ամուսնութիւնը որպէս քաղաքական իրաւունք ամենայն մարդոյ և նոյն իսկ պետութեան մէջ դուրս կ'ելնէ այլ իշխանութիւն մի, որ կ'արգիլէ քահանայից ամուսնութեան իրաւունքը, և պետութիւնը կ'հանդուրժէ այս բանին։ Եպիսկոպոսը կ'բանադրէ քաղաքացիք, որք չունին այլ ինչ յանցանք, բայց թէ կատա-

րած են պետութեան օրէնքը, և պետութիւնն ու քաղաքացիք ՝ի պաշտպանեն զնոսա։ Մի և նոյն պետութիւնը երդում կ՚առնէ եպիսկոպոսներէն և մի և նոյն եպիսկոպոսունք երդում կ՚տան պապին թէ բոլորով սրտիւ աշխատելու են հալածել հերետիկոսները, որոց մէջ են անշուշտ և բողոքականք։ Ուրեմն պետութիւնը համբերելու է որ գժտութեան սերմերցանուին քաղաքացւոց սրտերու մէջ, թոյլ տալու է որ քահանայք այսպանեն պետութեան հիմնաւոր սկզբունքը և նորա թշնամի աշակերտք պատրաստեն։ Ի՞նչ վիճակ է այս։ «Այլ ևս Քանոսա չենք երթար» ասաց Պիսմարք, բայց մեք երկար ժամանակ հնազանդինք այն տեղ. ուստի բաւական չէ ասա և անդ եպիսկոպոս մի պաշտօնէ զրկել, այլ պէտք է որոշ օրէնքով, և յատկապէս դաշնակցութեան օրէնքով առ միշտ վերջ դնել իրերու այս խառնակ վիճակին։ Առաջին օրէնքը թող լինի այսպէս. պետութիւնը իր ձեռքը կ՚առնէ քաղաքային գործերը և կ՚մոցընէ քաղաքական ամուսնութիւն, որով գայթակղութեանց մեծ մասը խոպառ կ՚վերջանայ յօդուտ նոյն իսկ պետութեան և ընտանեաց։ Երկրորդ օրէնքը թող ասէ. Այս օրէնս սկսեալ երկու օրէնք չկան պետութեան մէջ. եկեղեցական օրէնք գործադրողը պատիժ կ՚ընդունի և կ՚զրկուի պաշտօնէ։ Երրորդ օրէնքը. Պետութիւնն այնպիսի կազմութիւն կ՚տայ քաթոլիկական եկեղեցւոյն, որ լինէր համաձայն և համերաշխ (solidaire) երկրի օրինաց հետ։ Ժողովրդապետական օրէնքներ պետութեան մէջ և միապետական օրէնքներ եկեղեցւոյ մէջ, իրարու հակասութիւնք են. կրօնական գործերու մէջ ոչ անհատներու դէմ՝ սահմանք թոյլ կ՚տրուի և ոչ ժողովրդոյ դէմ. եկեղեցին կ՚հաստատուի պետութեան հիմքերու վրայ. եկեղեցին միանգամայն կ՚բաժնուի Հռոմէն։ Եւ այս վաղուց անել պէտք էր։ Որովհետև հռոմէական գահն ամէն պետութեանց դէմ անխոսիր պատերազմ կ՚քարոզէ, ուստի հաւէն գալու համար ամենընտիր միջոցն է բաժնուիլ իրմէ. սակայն ոչ կրօնը վտանգեալ կ՚լինի և ոչ քրիստոնէութիւնը, զի կրօնն և եկեղեցւոյ կազմութիւնը տարբեր բաներ են։

Մեծ են մեր յոյսերն ապագայի վրայ և արդի սերունդը կարող է զուարթ աչքով յառաջ նայիլ. ժեզուիթները կրնալու չեն հանիլ այն նպատակին, առ որ դարերով կ՚դիմէին։ Ոգւոյ ազատութեան սիրահար մարդիկ կարող են հոգը զինակից մի դանել հին քաթոլիկութեան մէջ, արհամարհելու չէ զնա, զի ժեզուիթութիւնն իրմէ ՝ի բաց վանելով նա կ՚ցանկայ ազատել աղը և ազգին շնորհել զեկեղեցին։

Ժամանակիս նշանները բարեգուշակ են։ Վերջին տարիներն անդրբալեռնական պետութիւնքը մին միւսէն ետև գլորեցան. իտալական Պուրպոնները կորան, Աւստրիան 1866ին կրած պատժէն դաս առնելով ազատութեան նոր ոգի ստացաւ, Գրանսայի մէջ բռնակալութիւնը տապալեցաւ և փոշի դարձաւ, մի և նոյն ժամանակ բացուեցան Հռոմի դռները, ուր այժմ պապը ոնկիւն մի նստած՝ զայրութեամբ նզովք կ'արձակէ և ատամներն կրճատելով անէծքի շանթեր կ'տեղայ նոր աշխարհի վրայ։ Նշանները բարեգուշակ են։ Կ'աւարտեմ Ուլրիք Հութթէնի խօսքերով. Ոգիները կ'զարթնուն — բաղդ է ապրիլ այսպիսի ժամանակ։» (Եռանդուն ծափահարութիւնք։)

Մնացածը յաջորդ թ-ով։

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԱՆԻԾԵՑԱԼ ՍՏԱՆ!*

— Շատ նուրբ կ'խօսիս. բայց չպիտի յաջողիս համոզել զիս որ ես աւելի հարուստ չեմ երբ դրպանս երկու սկուտ ունենամ քան թէ մէկ հատ։ Եւ ինչ որ ճշմարիտ է իմ մասիս՝ նոյնպէս է նաև ընկերիս, և ընկերիս ընկերին համար, բոլոր երկրին համար։ Ուստի երբ մէն մի գաղղիացի աւելի սկուտ ունի, Գաղղիան աւելի սկուտ ունի։

— Իմ ըսածս չիմացար. այդ սխալմունքդ ամէնքը կ'դաւանին, որ է՝ մասնաւորէ յընդհանուրն եղրակացընել։

— Ի՞նչ, միթէ այս ամէն եզրակացութեանց մէջ ամենէն համոզականը չէ՞։ Ինչ որ միոյն համար ճշմարիտ է, միթէ ամենուն համար նոյնը չէ՞։ Ի՞նչ քան է ազգը եթէ ոչ ամէն մէկը համախումբ։ Այդ ըսել կ'լինի թէ մէն մի գաղղիացի յանկարծ բթամտի չափ կրնայ մեծնալ առանց բոլոր գաղղիացւոց միջին հասակը մեծնալու։

*Տես երես 116, 157։

— Կ'հաստատիմ որ այդ արամախոհութիւնդ ճշմարտանման է, և ճիշտ ասոր համար ամէնքը կ'խաբուին։ Սակայն քննենք։

Տաս խաղասէր մարդիկ սրահի մը մէջ կ'գումարուին։ Դիւրութեան համար՝ սովոր էին իւրաքանչիւրը տաս ֆռանկ առնուլ, որոյ փոխարէն աշտանակին տակ հարիւր ֆրանք կ'դնէին, այնպէս որ մէն մի փուլ տաս ֆրանք կ'ներկայէր։ Խաղէն ետք՝ հաշիւ կ'տեսնէին, և խաղամոլներն աշտանակին տակէն կ'առնուին այնչափ անդամ տաս ֆրանք որչափ որ փուլ ունէին։ Այս տեսնելով խաղամոլնելէն մին, որ թերևս քաջ թուաբան էր, այլ խեղճ արամաբան, կ'ըսէ. «Պարոններ, հաստատ փորձառութեամբ կ'տեսնեմ որ խաղէն ետք՝ այնչափ աւելի հարուստ կ'դառնամ որչափ որ աւելի փուլ ունենամ։ Միթէ դուք ալ այս բանս չդիտեցիք։ Այսպէս ինչ որ ճշմարիտ է ինձի համար յաջորդաբար ճշմարիտ պիտի լինի ամենուն համար։ Ուստի մենք ամէնքս աւելի հարուստ պիտի լինինք՝ խաղէն ետք՝ եթէ ամէնքս ալ աւելի փուլ ունենանք։ Արդ՝ շատ դիւրին է այս բանս, բաւական է միայն կրկնապատիկ փուլ բաշխել իւրաքանչիւրին։» Եւ իսկոյն այս բաշխումն ըրին, բայց երբ խաղն աւարտելէն ետև՝ հաշիւ նստան, տեսան որ աշտանակին հազար ֆրանքը՝ ամենուն ակնկալութեան համեմատ՝ չէր կրկնապատկած։ Հարկ եղաւ զանոնք բաժնել, ինչպէս որ կ'ըսեն, քառ քառ, և սա արդիւնքը (մտածին արդիւնք) եղաւ. արդարև ամէն մէկ խաղամոլ կրկնապատիկ փուլ ունէր, բայց մէն մի փուլ՝ փոխանակ տաս ֆրանք ներկայելու, հինգ հատ միայն կ'ներկայէր։ Այն ատեն կատարեալապէս ստուգուեցաւ որ ամէն մէկուն համար ճշմարիտ եղածն միշտ ամենուն համար նոյնը չէ։

— Ի հարկէ այդպէս պիտի լինէր, քանի որ փուլերն առ հասարակ կրկնապատկելէն ետև՝ դրամագլուխն ալ աշտանակին ներքև չես կրկնապատկեր։

— Եւ դու ալ սկուտներու ընդհանուր ամում մը կ'ենթադրես առանց ասոր համապատասխանող իրերու աճման, որոց փոխանակութիւնը կ'դիւրացնեն սոյն սկուտները։

— Միթէ սկուտները փուլերու կ'նմանցընես։

— Ո՛չ, ուրիշ նկատմամբ, այո՝, քու մէջ բերած առարկութեանդ նկատմամբ զոր ջրել կ'ուզէի։ Քաջ դիտէ սա կէտը։ Եթէ կ'ուզես որ երկրի մը մէջ առ հասարակ սկուտներն աւելնան, պէտք է որ սոյն երկիրը կամ հանքեր ունենայ կամ իր առևտուրն այնպէս կատարուի որ օդտակար բաներ տայ փոխարէն դրամ ընդունելու համար։ Այս երկու

ենթադրութեան դուրս՝ անկարելի բան է դրամի ընդհանուր յաւելումը, քանի որ սկուտները շարունակ ձեռք ձեռք կ'անցնին, և այս պարագայիս մէջ, եթէ ճշմարիտ իսկ լինի որ մէն մի մարդ անհատապէս այնքան աւելի հարուստ լինի որքան որ շատ սկուտ գտնուի, դարձեալ կարելի չէ քիչ մ'առաջ հանած ընդհանուր եզրակացութիւնն ընել, քանի որ դրպանի մը մէջ աւելի սկուտ մը հարկաւ կ'ենթադրէ թէ ուրիշ դրպանի մը մէջ հատ մը պակաս կայ։ Միջին հաշակի մասին բրած բաղդատութիւնդ ալ այսպէս է։ Եթէ մեզնէ իւրաքանչիւրն 'ի վնաս ուրիշի մեծնար ստոյգ պիտի լինէր թէ մէն մի մարդ անհատապէս աղ որ հասակով մարդ մը պիտի գտնար, եթէ բաղդը յաջողէր, սակայն այս բանս երբէք ճշմարիտ չպիտի լինի բոլոր մարդոց համար խմբովին։

— Շատ լաւ։ Սակայն մէջ բերած երկու ենթադրութեանցդ մէջ յաւելումը ճշմարիտ է, և պիտի հաւանիս որ իրաւունք ունիմ։

— Մինչև ստուգման մը։ Ոսկին և արծաթն արժէք մ'ունին։ Անկից ստանալու համար մարդիկ կ'հաւանին փոխարէն օգտակար բաներ տալ որ նոյնպէս արժէք ունին։ Արդ եթէ երկրի մը մէջ հանք կայ, և բաւական ոսկի կ'հանէ որպէս զի դրսէն՝ շոգեշարժ մեքենայ մը գնէ, օրինակի համար, նոյն երկիրը կ'հարստանայ շոգեշարժ մեքենային մատուցած բոլոր վայելքով, որպէս թէ ինքն ըրած լինէր զայն։ Կարևոր կէտն իրեն համար սա է թէ արդեօք առաջին պարագային մէջ աւելի ճիգ կ'վատնէ թէ ոչ երկրորդին։ Իրաւ է որ եթէ սոյն ոսկին չարտահանէր գինը պիտի կորէր և Քալիֆորնիա հասած չարիքէն վատագոյնը պիտի պատահէր, վասն զի դէթ այն տեղեանկաղին մետաղներ կ'գործածեն այլուր շինուած օգտակար բաներ գնելու համար։ Ասով հանդերձ ոսկի կոյտերու վրայ անօթութենէ մեռնելու վտանգին մէջ կը գտնուին։ Մտածէ մի անգամ թէ ինչ պիտի լինէր՝ եթէ օրէնքն ոսկին արտահանութիւնն արգիլէր։

Իսկ երկրորդ ենթադրութեան դալով՝ տուրևառէն եկած ոսկին կրնայ շահ կամ վնաս լինիլ՝ երկրին աւելի կամ նուազ պէտք ունենալուն համեմատ, նոյնպէս օգտակար բաներու ունեցած կարօտութեան բաղդատութեամբ՝ որմէ աղատիլ կ'ուզէ որպէս զի ոսկի ստանայ։ Այս բանս վաճառականներն աւելի լաւ կ'կշռեն քան թէ օրէնքը. վասն զի եթէ օրէնքը սա սկզբունքն ընդունելով ըսէ թէ՝ ոսկին օգտակար բաներէն նախամեծար է, և այս նպատակին հասնելու համար բուռն միջոցներ գործածէ, Գաղղիան ալ հակադարձ Քալիֆորնիա մ'ընելու

պիտի ձկտի, ուր շատ դրամ պիտի գտնուի գնելու համար, այլ գնելու համար ոչ ինչ։ Միշտ դրութիւն մ'է այս որու նշանակը Միտասն* է։

— Կ'հաւանիմ որ ներս մտնող ոսկին դուրս ելնող օգտակար բան մը կ'ենթադրէ, և այս նկատմամբ նոյն երկիրը հաճութենէ մը կ'զրկուի։ Բայց միթէ նոյն բանի տեղն աւելի օգտակար բան մը չմտնիր, և արդեօք ինչ նոր նոր հաճոյից աղբիւր պիտի գտնայ նոյն ոսկին, քանի որ ձեռքէ ձեռք շրջելով աշխատութիւնն և ճարտարութիւնը կ'զրգռէ մինչև որ ինքն ալ ըստ կարգի դուրս ելնէ և օգտակար բանի մը մուտքը ենթադրէ։

— Ահա խնդրոյն խորը մտար։ Միթէ իրաւ է որ սկուտ մը փոխանակութիւնը դիւրայընող ամէն առարկայից արտադրութեան շարժառիթը լինի։ Ամէնքը կ'խոստովանին որ հինգ ֆրանքնոց մը հինգ ֆրանք կ'արժէ, բայց շատերը կ'կարծեն թէ այս արժէքը յատուկ բնութիւն մի ունի. թէ ուրիշ արժէքից պէս չսպառիր, թէ՝ ամէն անգամուն որ ձեռքէ ձեռք կ'անցնի, կերպով մը կ'նորոգուի, և թէ այն հինգ ֆրանքն այնքան անգամ հինգ ֆրանք արժեց որչափ անգամ որ գործողութեանց գրգիռ տուաւ, թէ ինքնին կ'արժէ այն ամէն բաներն որոց հետայնորդաբար փոխանակուած է. և այս բանիս կ'հաւատան վասն զի կ'ենթադրեն թէ՝ առանց այս հինգ ֆրանքնոցին, այն բաներն և ոչ իսկ պիտի արտադրուէին։ Մարդիկ կ'ըսեն. Առանց անոր կոշկակարը զոյգ մը մուճակ պակաս պիտի ծախէր, հետևապէս նուազ մթս պիտի գնէր, մնավաճառն սակայն նպարավաճառէն բան չպիտի գնէր, նպարավաճառը բժշկէն պիտի գրկուէր, բժիշկը փաստաբանէն և այսպէս հետզհետէ։

— Այդ ինձ անհերքելի կ'երևի։

— Ժամ է արդ դրամին բուն պաշտօնը վերլուծել, 'ի բայ առնելով հանքերն ու արտահանութիւնը։

Սկուտ (հինգ ֆրանք) մ'ունիս, ինչ կ'նշանակէ այս դրամը ձեռքիդ մէջ։ Իբրև ապացոյց և վկայ մ'է որ այս ինչ ժամանակ աշխատութիւն մը կատարեր ես, աշխատութիւն մ'որմէ օգուտ քաղելու տեղ ընկերութեան վայելել տուիր՝ քու գնորդիդ միջոցաւ։ Այն հինգ ֆրանքնո-

*Այսինքն տգիտութիւնը. վասն զի Միտաս՝ Փրիւգիոյ թագաւորը՝ երբ Աստոյծն երաժշտութեան աստուածն իր սրինգով, եւ Պան հովուաց աստուածն իր եղէգնով կ'մրցէին, մրցանակը Պանին շնորհեց եւ իր անընտրողութեան համար պատժուեցաւ։ Այս պատիժն էր երկու իշու ականջներ որ յանկարծ բուսան գլխոն վրայ։ Միտաս թէեւ ծիրանի ապարօշով գլուխը կ'զոցէր եւ այս գաղտնիքը միայն սափրիչը գիտէր, սակայն 'ի վերջէ երեւան ելաւ եւ ամենուն նշաւակ դնարձաւ . . . ։

ցը կ'վկայէ որ ընկերութեան ծառայողնէն մը մատուցիր, և ասկէ զատ նոյն ծառայութեան արժէքը կ'հաստատէ։ Կ'վկայէ նաև որ տակաւին ընկերութենէ համահաւասար իրական ծառայութիւն մը չես քաղած, ինչպէս որ իրաւունքդ էր։ Ընկերութիւնն՝ այդ իրաւունքդ, երբ և ինչպէս որ կամիս, գործադրելու վիճակին մէջ դնելու համար, քեզի տուաւ քու դնորդիդ ձեռքը ծանօթանքիր (reconnaissance) մը, պիպոլը մը, հասարակապէսորնէան մոբիճակ մը, վերջապէս ակոսպ մը, և այն սա կերպով կ'տարբերի դրաւորյեակարէ մ'որ ինքն իր մէջ արժէքը կ'կրէ, և եթէ կարդալ գիտես՝ մոքի աչքը, սկուտին վրայ գտնուած արձանագիրը, հեշտիւ պիտի կարդաս սա բառերը. Հապոցնէ+ գրաբէրէս ընկերութենան մապուցաշ համահաւասար ծառայողնէն մը, ընդունուաշ, հասպաղուաշ, գոբյուաշ և ղաքուաշ արձէքի մը գոնարէն որ իմ գոլը է։

Այժմ դու ինձ կ'տաս սկուտդ։ Կամ ձրիապէս կ'տաս, կամ փոխարէն մը սահմանելով։ Եթէ իբր գին ծառայութեան մը կ'տաս զայն ինձ, ահա հետևութիւնը. ընկերութեան հետ ունեցած իրական հաճոյիցդ հաշիւը տեսնուած, կշռուած և գոցուած կ'գտնուի։ Դու ծառայութիւն մը հատուցիր անոր սկուտի մը փոխարէն, հիմակ ալ սկուտդ կը դարձընես անոր ծառայութեան մը դէմ. հետևապէս առնելիք տալիք մը չունիս անոր հետ դու միայն։ Իսկ ես քիչ մ'առաջ գտնուած վիճակիդ մէջն եմ. ես այժմ քու անձիդ մէջ ընկերութեան ըրած ծառայութեանս համար հաշիւ ունիմ. ես կ'գառնամ իբր պարտապահանջ քեզ յանձնած աշխատութեանս արժողութեան համար, զոր չէի կարող ինքզինքիս նուիրել. ուրեմն նոյն պահանջքի, ընկերական պարտքին ապացոյցը, վկայագիրը պէտք է որ իմ ձեռքս անցնի։ Ձես կրնար ըսել որ աւելի հարուստ եմ, վասն զի եթէ առնելիք ունիմ, պատճառը սա է որ տուի։ Մանաւանդ չես կրնար ըսել որ ընկերութիւնն սկուտով մ'աւելի հարուստ է, որովհետև իր անդամներէն մին աւելի սկուտ մ'ունի, քանի որ ուրիշ մը պակաս ունի։ Իսկ եթէ այն սկուտը ձրի տաս ինձ, արդարև նոյն չափով աւելի հարուստ պիտի լինիմ, բայց նոյն չափով աւելի աղքատ պիտի դառնաս, և ընկերական հարստութիւնը, բոլորը մէկ առնելով, չպիտի փոխուի. վասն զի այս հարստութիւնը, արդէն ըսի, կ'կայանայ ճշմարիտ ծառայութեանց մէջ, իրական հաճոյից մէջ, օգտակար իրաց մէջ։ Դու ընկերութեան պարտատէր էիր, իրաւունքդ ինձի անցուցիր, և ընկերութեան փոյթը չէ, լոկ ծառայութեան մը պարտական լինելով, եթէ այն պարտքը քեզի կամ ինձի վճարէ։ Նա իր պարտքը կ'վճարէ մուրհակը տանողին։

— Բայց եթէ ամէնքս շատ սկուտ ունենայինք, այն ատեն ընկերութեան շատ ծառայութիւններ պիտի ստանայինք։ Միթէ հաճելի չէ այդ բանը։

— Կ՚մոռնաս որ իմ արդէն նկարագրած ընթացքին մէջ, որ իրականութեան պատկերն է, ընկերային միջավայրին կ՚քաղէ մարդ ծառայութիւններ անոր համար որ ինքն ալ հատուցած է։ Ծառայութիւնն ընդունողը ընդունուած և վճարուած ծառայութիւն կ՚ընտանայ միանգամայն, վասն զի այս երկու խօսքն յարակից են, այնպէս որ միշտ հաւասարակշռութիւն պիտի հաստատուի։ Ձեզ կրնար անշուշտ երևակայել որ ընկերութիւնն ընդունածէն աւելի ծառայութիւն հատուցանէ, և սակայն այս անուրջն իրագործել կ՚աշխատին ոմանք՝ սկուտները բազմապատկելով, ստակներն ու թղթադրամն այլայլելով, և այլն։

Պէպէ շարունակուի։

ԱԶԳԱՅԻՆ

ԸՆՏԱՆԻՔ

Մեր մէջ ընտանիքն օր ըստ օրէ իր նուիրական և ազդաշէն նպատակը մոռնալու և անոտակ մ՚անկայուն և շինուելի հիմնարկութիւն դառնալու վրայ է։ Վասն զի ընտանիքի հիմն, ամուսնութիւնն իր բնութիւնն ու նպատակը հետզհետէ կ՚փոխէ և պարզմանական գործողութիւն մը, շահադիտութիւն մը կ՚դառնայ, վասն զի ամուսնութեան միայն նիւթական, միայն հաճոյական, միայն վարձանքի կողմը կ՚նկատուի, և առ հասարակ հայք կ՚հեռանան Եւրոպայի այն ազնիւ դրութեան, որ՝ ամուսնութիւնն իբրև անբնական վիճակ համարելով թէև իրաք բնատնիքը չեն ջնջած, բայց անոր անունը միայն կ՚պահեն, ինչպէս կ՚պահեն կին և դուակներ առանց ճշմարիտ սիրոյ և միութեան, ինչպէս կ՚պա-

հեն պապական դաւանութիւնն առանց որ և է կրօնի, ինչպէս ազատութիւն և հաւասարութիւն կ'քարոզեն առանց ազատ և հաւասար լինելու։ Եթէ բարեկիրթ ազգ և ազնիւ, եթէ իմաստասէրներ անգամ չհաստատէին որ ամէն ընկերութեան կենսական զօրութեան, յաջողութեան և զարգացման խարիսխն ու պայմանն ընտանիքի ծոյն է, դարձեալ հայք կարող էին՝ պատմութիւն 'ի ձեռին, ցոյց տալ որ արդարև ընտանիքը կ'վերաշինէ ազգ մը, ընտանիքը կ'կործանէ ազգ մը։

Երբ Հայաստանի բոլոր բնական պատուարները փլան, երբ թագաւոր, իշխան և նախարար ցիր ու ցան եղան, բարոյական ամբարտակ մը միայն մնաց կանգուն, և այս ամբարտակն էր, եկեղեցիէն առաջ, ընտանիքը, որմէ խղճի ազատութեան և ազգայնութեան համար նահատակուելու պատրաստ զինուորներ ելան։ Ո՞վ պատրաստեց, կազմեց այս բանակը, ամուսնական սերտ կապը, այն երկնային սէրն որ ամէն աշխարհային նկատումներէ զերծ՝ կ'վառէր հայրենեաց ամենէն անշուք տնակին ներքև, և կին, ամուսին ու զաւակ պարտուց և անձնական անկախութեան մէջ կ'կրթէր։ Այս անգամ բարոյական հայրենեաց ազատարարն ոչ տուրն եղաւ և ոչ խաչն, այլ շինականին խոփը, ժողովրդեան զաւակին ընտանեկան սէրն, որու մէջ կ'ամփոփէր իր հողին, իր եկեղեցին, իր լուսաւորութիւնն, իր ազատութիւնն ու Հայաստանի վերաշինութեան ակնկալութիւնը . . . . Այլ երբ բուռն պարագաներ եղծեցին այս ընտանեկան կապն օտարութեան մէջ, երբ կրօնամոլութիւնն ու փառամոլութիւնը քանդեցին այս ամբարտակը, շատ դաղթական հայեր դայլերու որս ընկան և իրենց ընտանիքի հետ կորուսին իրենց անունն ու զոյութիւնը . . . .

Արդ՝ ո՞վ կ'արդիլէ մեզ այժմ մեր ընտանիքը վերականգնելու և անով ազգը։ Կա՛ տերութիւն մ'որուն օրէնքը մեր յետին ապաւէնը կործանելու ձգտի. եթէ կայ, այս օրէնքն մեր օտարոտի խնամութիւն ըրած ժամանակը կրնայ այժ ունենալ միայն և ոչ թէ ուղղակի մեր ներքին կենաց վրայ ներգործել։ Ուստի՝ ըստ մեզ՝ թէ 'ի Թուրքիա և թէ այլուր, մեր ընտանեկան վիճակին քայքայման բուն պատճառը մեր մէջն է, ամուսնութեան վրայ մեր ունեցած թիւր ըմբռման, մեր աշխարհասիրութեան մէջ է։

Ան հասարակ սէր չկայ արդի ամուսնութեանց մէջ, և հետևապէս առաքինութիւն։ Մեր մէջ ոմանք կարծեն թէ ամուսնութիւնն պարզապէս վայելք մ'է, հարանիք մ'է որու մեղրի ամիսը յաթաժամ կ'տևէ, ուստի կ'ընտրեն ինչ որ մարմնական փայլ, սեթևեռեռ, հրապոյր ունի և

չեն փնտուեր ընտրելոյն մէջ այն բարոյական և մտաւոր հանգամանքն որ միայն կարող են կազմել ընտանեկան յարատև երջանկութիւն և բարօրութիւն։ Ոմանք հարստութեան և փառայ միջոց կ'նկատեն զայն և ա-նոնց համելու համար անձնական անկախութիւն մինչև անգամ ազգութիւն կ'զոհեն, այլք՝ իբրև հիւանդասպահ կ'առնուն կին, որ իրենց ծերութեան վշտալի օրերը խնամեն։ Սակայն քանի քանի նպատակներ ունի ամուսնութիւնը, սակայն ամուսնութիւնն, ինչպէս կ'ըսէ Ահրենս սրտի և մտքի անխառն միութիւնն է, և սէրն սնոր մէջ երկու որոշ անհատներ լծորդող զօրութիւնն է . . . . : Պարզապէս մարմնական միութիւն մը ամուսնութիւն չէ, մարդս այս կերպով անբանի կարգը կ'իջնէ. նոյնպէս զուտ ոգեկան սէրն ամուսնութիւն չկազմեր. ըստ որում պլատոնական սէրը լոկ բարեկամութեան կապ մը կ'յօրինէ տարբեր սեռէ անձերու մէջ . . . : Ամուսնութիւնն իր Երկնային կերպարանին նկատմամբ, միութիւն մ'է որու Աստուած հաստիչ զօրութիւն մը հաղորդեց. սերնդակցն սրբավայրն է այն, ներքին վառարանն ուր ամէն ինչ որ երկնային և մարդկային է կ'մշակուի։

«Ամուսնութիւնը՝ բնութեան նկատմամբ դատելով՝ Աստուծոյ մեկ խորհուրդը կ'երևի, որպէս զի նիւթական աշխարհի մէջ դաշնաւորէ այր ու կնոջ դիմադարձութենէ ծագած երկուութիւնը։ Հոգեկան կենաց վերաբերութեամբ ամուսնութիւնն այր ու կնոջ մէջ կ'կատարեալ գործէ մտքի այն հանգամանքն որ նուազ զարգացած են։ Միտքն՝ որ 'ի մարդ կեր 'ի վեր է, զգացումով կ'լրանայ, որ կնոջ մէջ գեր 'ի վեր է։ Մարդս ընտանեկան յարկին ներքև սրտի անդորրութիւն և զոհութիւն կ'գտնէ և անկից գործունէութեան նոր ոյժ կ'քաղէ. կինն իր ամուսնոյն մէջ աւելի անկախ կամք և վերագոյն ծանօթութիւններ կ'գտնէ. և երկուքն ալ իրենց միութեան մէջ մտքի ներդաշնակ կեանքը կ'ընծայեն։

«Մարդկային Ճակատագրին վերաբերող ամէն մասնաւոր նպատակները՝ ամուսնութեան մէջ միացած են։

«Նախ ամուսնութիւնն այր ու կնոջ կրօնական քաջալերութեան համար միութիւն մ'է, Աստուծոյ Ճանաչումն ու զգացումը զարգացնելու համար ներքին աղբիւր մը, որոնք ընտանիքի ծոցը պարտաւոր են աղատ մշակութիւն մը գտնել, և սոյն մշակութեան վրայ արտաքին իշխանութիւնները բնաւ ներգործութիւն չունին։

«Ապա ամուսնութիւնն այր ու կնոջ յառաջադիմական պատպիպակութեան համար միութիւն մ'է, նոյնպէս գիտութեանց և արհեստից մէջ մի-

ասին կրթուելու միջոց մը, որոյ մշակութիւնը նոր կապ մը կ'յօրինէ ամուսնոց մէջ ողեկան յարաբերութիւններն ուելի սերտ և բաղմապատիկ գործելով . . . :

«Ամուսնութիւնն նաև մարդոյ բարոյական զարգացման, նոյնպէս զգնազան սպարտուց կատարման համար միութիւն մ'է. նախ ընտանեաց մէջ ամենէն կարևոր առաքինութիւնները կ'գործադրուին, որով ամուսինք կ'զօրանան կենաց ծանր թիւններն ու աշխոյժը միասին կրելու և անոր բարիքը վայելելու։ Ահա այս միութեան մէջ կ'զարգանան և ցոյժ կ'առնուն անձնուրացութեան, անշահախնդրութեան և արդարութեան զգայումները, ողորմութեան, չափաւորութեան և խոհեմութեան պարտիքն, ամենէն սրտագին, քաղցր և անոյշ յօժարութիւնները, որով կարելի լինի մարդկին իրարու կապել։ Ընտանիքն այն կեդրոնն է՝ ուր սկիզբ ընտիր սովորութիւններ կ'սփռին ընկերութեան վրայ, որու բարոյութիւնն ընտանեաց բարոյական ոգւոյն հետ կ'բարձրանայ կամ կ'ցածնայ։ Ընտանեկան կապակցութեան և ոգւոյն սկարբնաչն ընկերութեան մէջ ծանր ազդեցք կ'պատրաստէ, և միւս կողմէ, ընտանիքը կրնայ ճնայ իբրև սրբավայր և պատսպարան՝ ուր ապրանելի քաղաքական ընկերութենէ արտաքսեալ տարաբնական զգացումներ կրնան ապաստանիլ և ոնեղծ պահպանիլ։ Վերջապէս, ինչպէս կ'ըսէր Գուսս, «Ընտանիքն է փոքրիկ հայրենիքն որով մեծին կապուած ենք» կ'տարածէ նա մեր բնիկ հողին վրայ առաջին ջերմեռեր յիշատակաց մթնոլորտն, որ բոլոր կենաց մէջ մեզ ամենէն սիրական կ'մնան։ Անհատական անձն ու ընտանիքն այլափոխելով է որ քրիստոնէութիւնն մարդկային ընկերութեան այլափոխութիւնը գործեց և արդի ընկերութեան հասած մեծ չարիքն անհատական մարդուն և ընտանեաց վերաշինութեամբը միայն իրենց դարմանը պիտի գտնեն։»

Արդ՝ եթէ այս նշանաւոր իրաւագէտն ընտանիքի ազդութիւնն այսպէս գեղեցիկ գծերէն, ամուսնութեան վեհ նպատակները ցոյց տալէն ետև՝ եւրոպական ընկերութեան չարեաց միակ զեղ ընտանիքի վերակազմութիւնը կ'առաջարկէ, որչափ ևս առաւել մենք պարտիք օգուտ քաղել այս իմաստուն խօսքերէն, մենք որ մեր էութեան միակ նեցուկ և մեր վերակենդանութեան միակ յոյս և ապաւէն ընտանիքն ունինք։ Արտաքսենք մեր ընտանեաց ծոցէն շռայլութիւն, նորասիրութիւն և օտարասէր հակումներ. թող համեստութեան; պարզութեան և ճշմարիտ գաստիարակութեան սրբավայր մը դառնայ այն և իր մէջ ծնողին նախ պարտուց և իրաւանց ոգին, մարդկային ազատութեան և արժան

նստատուրթեան զգացումներն որ տ

գանէն տեղ մը կապէ և սնոր գոռոզութեան եղջիւրէն մեղ փրկէ, եւ ինդրոյն ուրիշ մէկ կողմը կ'ուզեմ նայիլ, շարժառիթն ու հետևութիւնը կ'ուզեմ նկատել։ Տարակոյս չունիմ որ Մասիս, ինչպէս Մեղուն կ'ակնարկէր, երկու կենդանեաց գաղին մէջ, զղջացած է դատ մղելուն Փոռնջի դէմ։ Շատ դիւրագրգիռ թերթեր կան և Մասիս ասոնցմէ մին է։ Կան գրուածներ որոց արժանի պատասխանն արհամարհոտ լռութիւնն է։ Ի հարկէ հին և հեղինակութիւն ունեցող թերթ մը չուզեր որ իր պատուոյն հետ խաղան, սակայն խաղայողալ կայ խաղացողալ։ մանաւանդ որ Շահ-Հիւսէյին շատ նպաստաւոր կերպարան մը չէր Մասիսի գլխուն վերեր։ Փոռնջ՝ Մասիսը վաղ, օյ, կենդանի անուաններ է, որոնք փոյթը, և ով կ'կարդայ Փոռնջը, և ով անոր կ'հաւատայ։ Լաւ, բայց Մասիս՝ թերևս ոչ այնքան բառէն այլ բառին առիթ տուող խնդրէն յուզուելով կ'գրգռի, կ'վիրաւորի, դատ կ'բանայ, և անարգական բառերուն այսպէս թև տալով ամէն պաշտօնատանց խորշերն ու հայոց ականջներուն մէջ կ'հնչեցնէ, թէ զինքը կենդանի և այլն անուաններ են։ Ահա այն ատեն միայն, ինչպէս ես, դու ալ անշուշտ կ'իմանաս որ Փոռնջը Մասիսի շնորհիւ մեծ անուն ստացեր է, և այն բառերն որ ինքնին մեռնելու դատապարտուած էին, յարութիւն առեր բերնէ բերան կ'թռին և հետաքրքրութիւն կ'շարժեն։ Այն ատեն բնականապէս խնդրոյն խորը մտնելու կ'ելնես և կ'տեսնես որ այս դատն աղբոր դատ մը չէ։ Թող որ այնպիսի և աւելի ծանր բառերու կիրառութիւնն Արևելքի մէջ առ հասարակ ճարտասանական ձևեր և բացատրութեան աղդու եղանակներ կ'սեպուին, թող որ մեր հայ լրագիրներն՝ մեծէն մինչև փոքրը, շատ անգամ իրարու երեսին աղտոտ բառեր նետած են և կ'նետեն, և ասոր համար ոստիկանութեան դուռը չեն դիմած, խել մը մարդիկ կան, մամլոյ ազատութեան թշնամի մարդիկ որ ուրախութենէ ծափ կ'զարնեն և կ'ըսեն. «Եթէ խմբագիրներն այսպէս, մենք ի՞նչպէս չզայրանանք երբ ազգին դէմ անդադար կ'գրեն գրիչներն, ի՞նչպէս Բ. Դրան չդիմենք այս կամ այն թերթը խափանել տալու համար։» Եւ ահա ձախող դատի մը ծուռ և տխուր հետևութիւնը։ Հայ թերթերը պարտին Է. Ծիրարտէնի քարոզած մամլոյ անսահման ազատութեան սկզբունքը դէթ իրենց վերաբերութեամբ գործով դատանիլ, ներողամիտ կամ անտարբեր մնալով համբակ կամ զազիր գրիչներու առջև, որպէս զի անխոհեմ ընթացքով մը՝ ոչ միայն թշնամիներու նշաւակ չդառնան, այլև վատին մօտ լաւ բառերու հրատարակութիւնն ալ արդիլել տալու առիթ չտան պետութեան, որու

տպագրական օրէնքը լայն ասպարէզ մը ձգած է ազգային խնդրոյ վիճաբանութեան համար։

Բայց ծուռ քայլ մ՚ուրիշ ծուռ քայլի մը կ՚տանի, և այժմ Մաքէ Օրբէրն ալ դատի կոչած է՝ ի պատրիարքարան, որու այս մասին իրաւասութիւնը հաշտարար լինելով, ՝ի հարկէ գործն անուշ տեղը պիտի կապէ։ Փափաքելի էր որ Մաքէ՝ ոչ միայն կենդանիներու վրայ գրելէն դադարէր, այլև այսպիսի դատերէ ետ կենար։ Թող հրաւիրէ նա կռուասէր թերթն որ իր ամբաստանութիւնը փաստով հաստատէ, եթէ կարող է։ Հերքէ այլ մի բռնահարեր, մանաւանդ երբ զօրեղ գրիչ ունիս։ Եթէ հարկ լինէր ամէն թշնամական խօսք կամ ակնարկութիւն դատելի համարել, գրեթէ բոլոր հայ թերթերն դատաստանական ատեանները պիտի գեգերէին։ Մամլոյ վէճերու մասին հասարակութեան կարծիքն է դատաւոր, և եթէ այս դատաւորը տղէտ և անկարող է ուղիղ վճիռ տալու, գուն գործէ զանի լուսաւորելու։ Օրբէրէ ուզած բանն է դատը, թէև անոր գերագոյն դատաւորն ամէն խնդրոյ մասին Էջմիածինն է, որու դատարանը կ՚ղրկէ քեզ երբ քահանայիդ հետ անդամ աւրուիս։ Բայց ինչո՞ւ անոր չդիմեր իր աբաքադիպ մամուլը ձեռք ձգելու։

Քանի որ այս տեղ ամենուն ուշը կենդանիները գրաւած են, ոչոք կը խօսի մարդոց վրայ, և մարդու պէս խօսողին միտ դնող չկայ։ Երբ անձնական կռիւ, դատ և վէճ դադրին այն ատեն թերեւս երկարօրէն գրեմ։ Օրբէրէ ալ անյարմար ժամ մ՚ընտրեց աբաքադիպ մամուլը դնելու համար հանդանակութիւն առաջարկել։ Ո՞վ ստակ պիտի տայ հիմակ, և եթէ տայ՝ փոխարէն ի՞նչ պիտի առնու։ Ճշմարիտը՝ այս ձև առուտուրին խելքս չհասնիր և զարմանքս կ՚տանի որ ամէն գործոց իբրև շարժառիթ շահը դատանող մարդ մ՚ելնէ ըսէ. «Զրի տուէք ինձի 250 լիրա որ աբաքադիպ մը դնեմ և ձեզի ժամն և մեծկակ թերթ ծախեմ։» Եթէ վաճառական մ՚ելնէ ըսէ քեզ, «Բարեկամ, տուր ինձի դրամագլուխ մը որ ափիոն դնեմ և դիւրագին ծախեմ» հարկաւ պատասխան տալու համար ուրիշէն խորհուրդ չես ապասեր, մանաւանդ երբ խնդրողն ուրիշ բան չպաշտեր բայց միայն շահը։ Բայց այս ազգային այն մասնաւոր գործ է եղեր։ Շահապաշտին համար այսպիսի զանազանութիւն մը չկայ, ինչպէս որ իր գործը խօսքէն լաւ կ՚բացատրէ իր սկզբունքը . . . ։

ՇԱՀՆՈՒՐ

ՊՂԼ ՂԱՐԻՊԻ ԱՍԱՑԱԼՔ*

Նաև թէ ղարիպն ասեմ
Խիստ դժուար առաջին տարին
Թէ նուշ թէ շաքար ուտէ
Սիրտն է սև երեսն է դեղին.
Զի թէ իւր աշխարհն յիշէ,
Ողջ անձամբ լինի ցաւագին
Մտածէ սիրուն եղբարքն
Սիրտն այրէ յոյժ յոյժ դառնագին:
Նշնեմ դէպ երկիրս նստիմ
Պահիկ մի ափիկս երեսիս
Միթէ հարաֆ† մի գնար
Որ հանդչի իմ ղարիպ հոգիս.
Ո՞վ իմ ցաւն պատմել կարէ
Որ այնչափ խասրաթ կայ սրտիս:
Կամիմ արկանել գիս դեռ
Որ առեալ տանէ 'ի ծով գիս
Կեանքս աշխարհէս անցաւ
Բայց Աստուած ունիմ յոյս
Ակն ունիմ արժան առնէ
Տեսանել ամենիւ սիրելոյս:
Ո՞հ կ'ասեմ արիւն կու գայ
Շատ լալուս հոգոց հանելոյս
Այնչափ ախ ու ահ ասի
Վախնամ ելնեմ աչերուս
Եւ թէ մարդ մարդոյ անիծէ
Թող ասէ թէ ղարիպանաս,
Ի ղարիպու թիւն երթաս
Ղարիպի հաչն գիտենաս

Սալն քեզ սրնարք լինի
Աւարի մէջն տուրանաս‡
Զի թէ քո աշխարհն յիշես
Արտասուօք քեզ լուանաս:
Ղարիպ եմ օտար երկիր
Սիրտս նեղի կեանքս սպառի
Թէ սրախս խասրաթն ասեմ
Սպառաժ քարերն պատռուի,
Աչերս իրրև զամպն ուռեր
Երեսէս 'ի վար կու թափի
Սիրտն իմ քան զկուժ կոտրեր
Քանի ջուր ընուն կու տանի:
Ով իմ Արարիչ Աստուած
Մի առներ զմահն իմ 'ի սիրոյ
Իմ մահն պատերազմ արա
Մէջ հազար թափած թրերոյ§
Մարդն խասրաթով մեռնի
Չէ պատիժ 'ի հոգ թաղելու
Մարդ պատերազմ մեռնի
Պարտ է 'ի վերայ վանք շինելոյ:
Սարերն ամէն ձիւն եկեր
Սուրերու վէրքն‖ վերացեր
Նա ձայն 'ի ճղերն առեր
Ծառն գիւր տերևն թափեր
Ամէն հաւն իւր ընկեր գտեր
Ես եմ մոլորեր
Ամէն քարն իւր տեղն դադարեր
Ես եմ գլորեր:

*Գարաւոր հնութիւն մ'է:
†Հարաւի հով:
‡Հաւասարիս:
§Սուրերու:
‖Փայլ շողուն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱՅԻ արդեան կառավարութիւնը փոխանակ Թիէրի խաղաղասէր և խոհական քաղաքականութեան հետևելու, անձնական նկատումներէ մղեալ՝ սկսած է Հայրենեաց շահը վտանգի մէջ դնել, և աղդին ակնկալութիւններն 'ի դերև հանել։ Լիոնի երեսփոխան Պ. Ռանը՝ իբրև անդամ Բարիզի հասարակուրդի պատերազմական ատենի մը առջև ամբաստանել կ'առաջարկուի աղդային ժողովին և այս առաջարկութիւնն, որու մէջ կառավարութեան մատը կ'երևի, մտադիր կ'ընդունուի, և ասով վրէժխնդրութեան նոր դրդիռ մը կ'տրուի Լիոնի 90,000 կարմիր հանրապետականաց, որ զինք ընտրեցին։ Կառավարութիւնը Քէրոնէր անուն լրագիրն ալ կ'խափանէ և այս առթիւ աղդային ժողովին մէջ բացուած բուռն վիճաբանութեան միջոցին՝ Կամպէթա՝ ներքին գործոց պաշտօնատուէն բոլոր դաւառաց կուսակալներուն դաղանապէս ուղղեալ շրջաբերականի մ'օրինակը կ'կարդայ, շրջաբերական մ'որով անոնք կ'հրաւիրուին լրագիրներն «բռնալու», միապետութեան կուսակիցները շտացընելու, և ահագին հարուած մը կ'տայ արդի կառավարութեան բարոյական իշխանութեան. և Պ. Պէօլէ, ներքին գործոց պաշտօնեայն, այս անբարոյական շրջաբերականին պատասխանատուութիւնն իր վրայ առնելու յանդգնելով հրապարակաւ, Ֆրանսայի մէկ ծայրէն միւս ծայրն անկեղծ աղատասէր և հանրապետական մարդոց զայրոյթը կ'դրդռէ, և ուրիշ մեքենայութիւններ կասկածել կ'տայ։ Պարսից Վ. Շահն արդէն Ֆրանսա հասած է Անկլիայէն՝ ուր դտած փառաւոր ընդունելութիւնը թերևս իր յիշողութենէն փարատելու կ'սկսի Եւրոպայի ուրիշ մայրաքաղաքներու մէջ տեսած շքեղ հանդէսներու յիշատակը։ ԱՆԿԼԻՈՅ ժողովուրդն ու կառավարութիւնը քաղաքական շահերով զբաղելու, Դիզրաէլիի տնվերջանալի դատին վրայ խօսակցելու, Իրլանտայի մասին մտատանջութիւն կրելու սովորութիւնն պահ մը մեկուսի թողլով, Կիւրոսի և Արտաշէսի յաջորդը մեծ ճոխութեամբ կ'ընդունի, և Վ. Նասր–էտ–տին Շահին շարժումները կ'քննէ։ Այս հիւրասիրական եռանդը ցոյց տուին նաև անկլիացիք ատենօք քաջաղուն հայրենասիրի մը, այս է Կարիպալտին։ Ինչ անհուն տարբերութիւն այս երկու երևելի անձերու մէջ։ Մին Ա-

սիոյ դարաւոր ինքնակալութիւն մը կ'ներկայէ, միւսն ազգերու վեհանոութիւնը. մին՝ իր ականաղարդ սնձոքն ամենուն աչքը կ'շլացնէ, և վաղեմի տէրութեան մ'ոյժ տալու համար Եւրոպայի նեցուկ և նշոյլ կ'խնդրէ, Իտալիոյ անմահ զաւակն իր արիական բազկովը վերականգնած ազգ մը կ'ցուցնէ և մեծ ապագայ մը։ Բայց աշխարհիս քաղաքական դէպքն իմաստասիրական ոգւով դատողին առջև այս արքայական այցելութենէ աւելի մեծ արժէք ունի մարդկային մարմնոյ տարբեր տարբերութեան բարձման նկատմամբ հաստատուած դաշնադիրն, զոր Զանզիպարի Սուլթանը ստորագրելու կ'ստիպուի, Պ. Պարթ Գրէրի առաջարկութեան համեմատ, աւելի անկիրական թնդանօթներու տեսքէն ահարեկելով, իրաւ, քան թէ մարդասիրական դիտողութիւններէ համոզելով։ Ափրիկէի համար քաղաքակրթութեան դուռ մ'է այս դաշնագրին ստորագրութիւնն և Անկլիոյ համար պարծանք մը։ ԻՏԱԼԻՈՅ պաշտօնէութիւնը կ'հրաժարի և Պ. Մինկէդի Թագաւորին հրամանին համաձայն՝ նոր պաշտօնէութիւն մը կազմելու կ'երթայ։ Արտաքին միաբանութեանց բարձումը կ'վճռուի և այս մասին կառավարութեան առաջարկած օրէնքն ազգային ժողովը կ'ընդունի և կ'վաւերէ։ Ընդհանուր հարուած մ'է այս կղերական ազդեցութեան դէմ և Իտալիոյ քաղաքագէտները Մինկէի կարծիքին կ'հետևին և գործով կ'հաստատեն որ ապաստել գէպնալը յաղթել է։ Կարծես թէ Իտալիան հռոմէական հին հասարակապետութիւնը վերականգնելու կ'նկրտի յամրապէս այլ հաստատապէս։ Լաւ է այս։ Ազգի մը յառաջադիմութեան պարբերելու կանգնող մարդոց առաջին պարտքն է չոսոսոսել։ Քաղաքականութեան մէջ ազգերու ոստումն անդարմանելի յանցանք մ'է։ Երանի՛ թէ ՍՊԱՆԻԱ անկից օրինակ առնար։ Այս անբարդ երկիրն այսօր քաղաքական այլ և այլ կուսակցութեանց ձեռքը խաղալիկ եղած է և իր քաղաքագէտներն սկսած են շուարիլ փրկութեան ճամբայ մը գտնելու համար։ Իրաւունք ունին շուարելու, վասն զի ազատութեան հետ նոյն իսկ Սպանիա վտանգի մէջն է, նա մանաւանդ նորընտիր ազգային ժողովին կողմէն դաշնակցական հասարակապետութիւն հրատարակուելէն ի վեր։ Մեր ժամանակը՝ ազատութիւնն կարգաւորութեան (ordre) հետ կրնայ հաստատուիլ։ Ինչպէս ըսաւ Ռոսէսբիէր, քու ազատութիւնդ կ'դադրի երբոր ուրիշին իրաւունքը կ'սկսի, և ուրիշին, այսինքն ամենուն իրաւունքը կարգաւորութիւն կ'պահանջէ հաստատ և անեղծ մնալու համար. վերջուր այս պայմանն և ահա ազատութիւնը յեղափոխութեան և յեղափոխութիւնն ալ անիշխանութեան կ'տանի։ Ահա

Սպանիա այս սոսկալի անդունդին եզրը հասած է։ Գարլոսեան աւազակաց՝ յանուն կրօնի և Աստուծոյ՝ ըրած աւերումները, և թափած արիւնը, զօրաց հետաքրքիրութիւնն կարգ կանոնի դէմ, որմէ կ'հետևի իր տկարութիւնը, աէրութեան գանձին դատարկութիւնն ու ահագին բացը, կուսակցութեանց կոշտ հակառակութիւնն, կղերական և աշխարհական դասուն հասարակաստեղութեան դէմ դիմադրութիւնն այս անդունդին խորութիւնը կ'ցուցնեն Եւրոպայի, և վհատութիւն կ'պատճառեն նոյն իսկ Գասթէլարի, Բի ի Մարկալի, Գիկուէրայի։ Եթէ իրաց այս վիճակն առեն մ'ևս շարունակուի, եթէ Պիսմարգի, Թիէրի նման քաղաքական հանճար մը կամ կորովի սուր մ'երևան չեկնէ, անշուշտ եւրոպական միջամտութեան տեղի պիտի տայ Սպանիոյ արդի քաղաքական շփոթ և վտանգաւոր վիճակը։ ԳԵՐՄԱՆԻԱՆ սոսկալի պատերազմն տարած յաղթանակները դեռ ևս լիովին չվայելեր։ Նոր կայսրութեան հետ նոր դժուարութիւններ ծնան, և անդրալեռնականաց դէմ հաստատուած օրէնքը բաւական տաղնապ կ'պատճառէ կառավարութեան։ Յուսալի է որ Պիսմարգի քաղաքական հեռատեսութիւնն ապարդիւն հանէ այս դիմադրութիւնները, թէև լրագիրներէն ոմանք կ'կարծեն թէ անդրալեռնական դասը մինչև Կայսեր մօտ ճամբայ դրած և անոր առջև Պիսմարգի համարումը կոտրելու յաջողած է։ Առ այժմ Պիսմարգ նշանաւոր յայտարարութիւն մը կ'ընէ Խորհրդարանին առջև, այս է թէ՝ Գերմանիան կարտինալաց ժողովին չպիտի միջամտի՝ երբ նոր պապ մ'ընտրելու ժամը դայ, այլ նորընտիր պապն ընդունելու կամ չընդունելու իրաւունքն իրեն կ'վերապահէ, և այս վերապահումն լի է սպառնալեօք անդրալեռնականաց դէմ։ Բայց կ'ըսուի նաև թէ նոր պապի մ'ընտրութեան պարագային համար դաշնակցութիւն մը հաստատուեր է Խոսլիոյ ու Գերմանիոյ մէջ։ Եթէ իրաւ է, Ֆրանսայի արդի կղերական կառավարութիւնն իտալացւոց կասկածներ տղելով այսպիսի դաշնակցութեան մը հաստատութեան անուղղակի կերպով նպաստամատոյց պիտի լինի։ ԱՒՍՏՐԻԱ իր տիեզերական Արուեստահանդէսովն ու ճանկութիւններէ հեռուող դրամական տաղնապով կ'զբաղի։ ՌՈՒՍԻԱՆ դէպ 'ի կեդրոնական Ասիան կը դիմէ և արդէն Քօֆման զօրապետին-Քիվան գրաւելը հեռագրէն կ'իմացուի։ Պ. Ֆէրտինանտ Լէսէբսի Սէզ-Կեդրոնական-Ասիական անուն նոր առաջարկած երկաթուղին, որուն նկատմամբ Ռուսիոյ Վ. Կայսեր հաւանութիւնն և պաշտպանութիւնն արդէն շնորհուած է, Լէսէբսի և Բարիզի ռուսաց դեսպան՝ Օրլոֆ կոմսին նամակներուն նայելով։

նպատակ ունի Ռուսիոյ երկաթուղիները Կեդրոնական Ասիայէն երկրնցընելով միացընել անկլօ–հնդկական երկաթուղեաց հետ։ Եթէ այս տիտանեան ձեռնարկութիւնն 'ի գլուխ հանուի, որ ոչ այնքան ախորժելի է Անկլիոյ քաղաքականութեան, Ռուսիոյ համար զործունէութեան և յառաջադիմութեան նոր ասպարէզ մ'ևս պիտի բացուի։ Հաղորդակցութեան դիւրութիւնն այժմ'աղդերու քաղաքակրթութեան էական պայմանն եղած է։ ԹՈՒՐՔԻԱ ու ԵԳԻՊՏՈՍ իսկ ընդունած են այս ՀՇմարտութիւնը։ Վ. Սուլթանն իր ուշադրութիւնը նուիրած է Բումելիի և Փոքր–Ասիոյ երկաթուղեաց շինութեան։ Եթէ Թուրքիոյ համար բարեդուշակ է այս իրողութիւնն, ոչնուազ բարեդուշակ է Եդիպտոսի համար դէպ 'ի Սուտան շինուելիք երկաթուղին, որով Եւրոպան Ափրիկէի ներքին կողմերուն հետ հաղորդակցութիւն հաստատելով պիտի կարենայ իր լուսաւորութեան տարրերն անդր ևս հասցընել։ Եդիպտոս սահմանուած է՝ հայ Դավուրի մ'աջակցութեամբ, քաղաքակրթութեան մեծ դեր մը խաղալ Ափրիկէի մէջ, և արդէն իր այս նպատակին հասնելու համար յաջողած է՝ նախ դատաստանական վերանորոգումն ընդունելտալու Եւրոպայի, Գրանսայէն և Ռուսաստանէն զատ, երկրորդ՝ Վ. Սուլթանէն շնորհուած հրովարտակի մը համեմատ, Եդիպտոս հետզհետէ Ափրիկեան տէրութեան մեծ կարևորութիւն մը պիտի ստանայ, իր քաղաքական յարաբերութիւնները պիտի ընդարձակէ օտար տէրութեանց հետ, աւելի մեծ բանակ կազմելու, փոխառութիւններ ընելու և Եւրոպայի հետ բանակցելու արտօնութիւն պիտի ունենայ։

ՀԲԱՆՍԱՑԻ ԱԶԳԱՑԻՆ ԺՈՂՈՎԸ

1871 փետրվարի 12ին՝ Գրանսայի այժմու ազգային ժողովն իր առաջին նիստն ըրաւ Պօրտօյի փոքրիկ թատրոնին մէջ, և յաղթական թշնամոյ մը հետ խաղաղութեան դաշն կնքելու և պարտութեամբ լիովին անկեալ երկիր մը վերականգնելու պաշտօնն սկսաւ։ Երբ խաղաղութիւնը հաստատեց և դերմանայիք իրենց բնիկ հողը դառնալու համար առաջին քայլն առին՝ երեսփոխաններն որոշեցին մայրաքաղքին աւելի մօտ տեղ մը դումարուիլ, բայց անդուսպ բարիդցիներէն երկն-

չելով, Վէրսայի պալատը՝ Լուի ԺԴ. թագաւորին թատերական սրահն ընտրեցին իրենց ժողովարան։ Այս միջոցին որ սոյն ժողովը առ հասարակ ամենուն ուշադրութիւնը կ'գրաւէ, բաւական հետաքրքրաշարժ պիտի լինի թերևս անոր կազմուածքն ուրուագիրը։ Այս ժողովը ունի 750 անդամ, որ ընդհանուր քուէարկութեամբ ընտրուած են. ամէն մէկ երեսփոխան 25 տարին լրացուցած է, և 360 լիրա ստերլին վարձք կ'ստանայ, որով ժողովականութեան բոլոր ասպարէզ կ'թողու ամէն անոնց որ իրենց հայրենակցայ քուէն կրնան ընդունիլ։ Ժողովին առաջին գործն է նախագահի մ'ընտրութիւնը. պաշտօնական մ'որուն իշխանութիւնը մեծ է ժողովարանին մէջ։ Այն 'ի կարգ կ'հրաւիրէ անկանոն ժողովականներն հնչակը զարնելով, այն՝ նիստը կ'գադրեցնէ զլիսարկը զլուխը դնելով, այն՝ հրաման կ'տայ կամ կ'մերժէ ատենաբանից խօսելու, այն՝ վճռական քուէ ունի երբ քուէարկութեան արդիւնքն հաւասար զանուին, և տարին 2,400 լիրա ստերլին վարձք ընդունելէն զատ իր բնակարանն ունի ժողովարանի շէնքին մէջ։ Նախագահին կ'օգնեն վեց ատենադպիր որ անոր հետ ժողովին դիւանը կը կազմեն և երեսփոխանաց քուէարկութեան արդիւնքը կ'ցուցնեն։ Այնուհետև չորս դանձապետները կ'ընտրուին որ ժողովին վարիչ պաշտօնաւորներն են, և կրակ, լոյս, կարասի կ'մատակարարեն և մառանի պէտքերը կ'հոգան, նոյնպէս պաշտօն ունին ընդունելութեան տոմսակները բաշխել։ Ասոնք իրենց երեսփոխանական իրաւունքէն զատ 200 Լ. ստերլին տարեկան կ'ընդունին։ Ժողովին բոլոր տարեկան ծախսն է 320,000։

Այս 750 երեսփոխաններն՝ յիսուն հոգիէ բաղկացած տասն հինգ դիւան կ'կազմեն որ վիճակաւ կ'ընտրուին ամէն տարի, և ինքնիստիր նախագահներ ունին։ Ամէն խնդիր որ առաջին անգամ ժողովին կ'գայ առաջ՝ նախագործ (initiative) դիւանի մը կ'զրկուի, որ մէն մի ընդհանուր դիւանէ առնուած երկերկու երեսփոխանէ կ'բաղկանայ, և այս նախագործ դիւանը կ'որոշէ թէ արդեօք առաջարկեալ խնդիրը նկատողութեան արժանի է։ Այնուհետև ժողովը բաց նստի մէջ նոյնին վրայ կ'խորհրդածէ, ապա ուրիշ դիւանի մը կ'առաքէ զայն որպէս զի տեղեկագրով իրեն ներկայացուցի, և հուսկ ուրեմն՝ եթէ ընդդիմութիւն չգտնէ, ժողովին մէջերեք անգամ կ'կարդացուի։ Սակայն պաշտօնական ծրագիրներ և անոնք որ իբրև սպեսիալական կ'քուէարկուին, նախագործ դիւանէն չեն անցնիր, և այս վերջիններն դիւանի մը կողմէ քննուելէն ետև՝ մէկ անգամ միայն կ'կարդացուին և օրէնք կ'դառնան։

Բուէարկութեան եղանակները կերպ կերպ են. բայց սովորաբար երկու եղանակ կ'գործածուին. կամ «յո» և «ոչ» բառերն հետզհետէ ոտքի վրայ կ'ելնեն, կամ իւրաքանչիւր երեսփոխան սպիտակ կամ կապոյտ թղթի մը վրայ կ'գրէ իր անունն (եթէ պոհ կամ դժպոհ է) և ատենագրիներուն ներկայացած տուփին մէջ կ'նետէ։ Ատենաբանից խօսքի կարգը նախագահը կ'որոշէ և իւրաքանչիւրն անոր նստած տեղին ներքև դտնուած ամպիոնն կ'խօսի։ Ատենաբանը խօսքն սկսելէն առաջ գրեթէ բաժակ մը շաքարոտ ջուր կ'ընդունի, թէև ոմանք, և 'ի մասնաւորի Պ. Թիէր և Բ. Բէրդիէ սուրճ կամ Պուրկոնի գինի կ'ըմպեն։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Բուռն խօսք մը. Գասապա՝ ուր Հայաստանն տունուոր հայ կայ, այս վերջին օրերս աղէտալի երկպառակութեան տեսարան մ'ընծայեց և խեղճ դասատուի մը գլուխը կերաւ։ Պ. Կարապետ Պ. Թարչինեան, այս դժբաղդ երիտասարդն՝ որ Գասապայի դպրոցի հոդաբարձութեան սիրելի եղած էր, քանի մը պատճառաւ, զոր աւելորդ կ'համարինք բացատրել, ոմանց դժգոհութիւն պատճառելով ինքզինքը մեծ հակառակութեան մը ենթակայ կ'դտնէ։ Իր թշնամիներն ուրիշ դասատու մը բերել տալով անոր տեղը կ'նստեցնեն և Պ. Թարչինեանը Ճամբել կ'ուզեն։ Այն ատեն կռիւը կ'մեծնայ. երկու ներհակ կողմեր կ'մաքառին և 'ի վերջէ կ'որոշեն Պ. Թարչինեանը դանակոծ ընել։ Հէք դասատուն հայածողաց ձեռքէն խոյս տալու համար ինքզինքը դպրոցին մէկ պատուհանէն կ'նետէ և ոտքին վարի ոսկորը կ'կոտրէ։ Գործը կը ծանրանայ. տեղւոյս Քաղաքական ժողովոյ մէկ քանի Ս. Ս. անդամներ կռուին տեղը կ'փութան, յանցաւորներն բանտել, և դասատուն քաղաքը բերել կ'սան և բժշկաց խնամոց կ'յանձնեն։ Սակայն թշուառ պատանւոյն ազգերը կտրել հարկ լինելով 'ի վերջէ կ'վախճանի։ Գրեթէ բոլոր հայ հասարակութեան զայրոյթը կ'գրգռի այս աղէկտուր մահուան շարժառիթ եղողներուն դէմ և ամենքն մեծ սդով կ'հանկուին։

Այս է ահա բռնութեան սոսկալի հետևանքն. ահա այսպէս կը

վարձատրուին սովորաբար մեր մէջ մեր դասատուները . . . : Քանի՞ քանիներ արդէն բարոյապէս սպաննուելէն ետև՝ դերեզման իջած են :

Վա՛յ այն ժողովրդեան որ այսպիսի սոսկալի կուիս և երկպառակութեան ենթակայ կ՚անուի և իր ուսուցիչներն անոնց զոհ կ՚ընէ . . . :

— Աշխարհիկ լեզու և պարտ . Կեդրոնական վարչութեան Ուսումնական խորհուրդն՝ ինչպէս բոլոր դասատուց՝ նոյնպէս Զմիւռնիոյ ազգային վարչութեան շրջաբերական մ՚ուղղուած էր , որով կ՚ինդրէ Ուսումն. խորհուրդ կազմել , եթէ չկայ , որպէս զի անոր հետ յարաբերութիւն հաստատելով՝ թեմական դպրոցներու վրայ պէտք եղած խնամքը տարուի : Այս շրջաբերականն՝ որ աշխարհիկ լեզուաւ գրուած էր՝ Քաղաքական ժողովոյ միջոցաւ տեղւոյս Ուսումն. խորհրդոյ կ՚հաղորդուի : Արշալոյս՝ իր 964ոյ թիւին մէջ՝ ի լրոյ իմանալով (թէև անոր խմբագիրն Ուսումնական խորհրդոյ անդամ է և կարող էր իրը ստուգել և այնպէս գրել) կ՚յայտնէ թէ Ուսումնական խորհուրդը չպիտի պատասխանէ շրջաբերականին , ըստ որում աշխարհաբար լեզուաւ գրուած է , և ասոյ տեղւոյս Ուսումն. խորհուրդը վերադարձած է և իր պարտքը կատարած կ՚համարէ : Այս լուրը բոլորովին սխալ է : Վասն զի սատ գապէս գիտենք որ Ուսումնական խորհուրդն այսպիսի որոշում մ՚ըրած չէ բնաւ , այլ՝ ընդ հակառակն՝ մէկ քանի խորհրդականներ տրամադիր են՝ երբ նէստ կազմուն , պատասխան տալու և Կեդր. Ուսումնական խորհրդոյ հետ յարաբերութիւն հաստատելու : Ուստի Արշալոյս իրեն յատուկ գրաքննութիւն ոգիէն մղեալ գրած պիտի լինի այս լուրն ու գիտցաղութիւնն որ տարօրինակ թռուցաւ մեզ : Վասն զի չիրցանք հասկնալ թէ ինչու համար Ուսումնական խորհրդոյ պարտքը կատարած պիտի լինի աշխարհիկ լեզուաւ պաշտօնական դիր մը կարդալով : Մինթէ մեր բոլոր թղթակցութիւններն այս ոճով չէ՞ն , և մինթէ աշխարհիկ լեզուին կիրառութիւնն անպատուութիւն է : Այս նորելուկ գրութեամբ ամէն հայք անպարտ պէտք է սեպուին , ըստ որում ամէնքն աշխարհիկ լեզուաւ կ՚բանակցին : Թերևս Արշալոյս կարծէ թէ գրաբառ կ՚գրէ ու կ՚խօսի , սակայն Սխալ ասոր հակառակը կը պնդէ : Մինթէ տեղւոյս Ուսումն. խորհուրդն հին լեզուաւ կ՚գրակցի այլոց հետ : Ըստ մեզ՝ գրաբառ լեզուն քանի մը պաշտօնական գրուածներով հասարակաց թեան մէջ չտարածուիր : Եթէ մեր Սեծ. պաշտօնակիցն այդչափ սիրահար է այդ հին լեզուին թող իր թերթն այդ ոճով խմբագրէ . այն ատեն թերևս ժողովուրդը վարժի ոչ միայն գրել այլև խօսիլ գրոց լեզուաւ :

— Թատրոն։ Այս միջոցիս Եւրոպայի մէջ 1,507 թատրոն կայ։ Իտալիա՝ իր 26 միլիոն բնակիչներով ունի 348 թատրոն, և թատերական վիճակագրութեան գլուխը կ'անցնի։ Յետոյ կ'գայ Գրանսա՝ բնակիչ՝ 36 միլիոն, թատրոն՝ 337. Սպանիա՝ 16 միլիոն բնակիչ, թատրոն՝ 160։ Միւս կողմէն Գերմանիա՝ որ այսօր 41 միլիոն բնակիչ ունի, հազիւ 191 թատրոն կ'պարունակէ, և Աւստրիա՝ 152 թատրոն և 36 միլիոն բնակիչ։ Մեծն Բրիտանիա ունի միայն 150 թատրոն, և Ռուսաստան իր 70 միլիոն ժողովրդով լոկ 44 թատրոն։ Տեսարանական առաջնութիւնն աւելի նշանաւոր է լատինական ըսուած ցեղին մէջ, և խորհողմարդիկ՝ որ ազգերու այլ և այլ հիմնարկութիւնները քննելու տրամադիր են, այս վիճակագրութենէ կրնան զանազան հետևութիւններ հանել։

— Շնորհեան վրայ օրէնք։ Մոլէսի օրինաց համեմատ՝ շնութիւնն մահուամբ կ'պատժուէր. մինչև Օղոստոս կայսեր ժամանակը՝ հռոմէացիք կերպաւոր օրէնք չունեցան շնութեան դէմ։ Այս Կայսրն առաջին անգամ սոյն յանցանքին դէմ օրէնք մը հաստատեց, այս եղաւ Ժիւլիա օրէնքը, և դժբաղդութիւնն ունեցաւ առաջին անգամ սոյն օրէնքն իր որդւոյ դէմ գործադրել։ Լիգուրիոս՝ շնութիւնը հայրասպանութեան պէս կ'պատժէր. Անկլիոյ թագաւորը Էտմոնդ՝ մարդասպանութեան պէս. բայց Կանուտ թագաւորը բաւական կ'սեպէր մարդն արտաքսել և կնկան քիթն ու ականջները կտրել տալ։ Սպանիոյ մէջ յանցաւորը մեղանչող մասը կորուսելու կ'դատապարտուէր, Լեհաստանի մէջ, նոյն մասէն հրապարակաւ կ'գամէին յանցաւորը, որու ձեռքն ածելի մը տալով ազատ կ'թողուին որ կամ ներքինի դառնայ կամ նշաւակ մնայ գամուելով։ Հին սաքսօնները կինը կ'այրէին, և մոխրին վրայ կախաղան մը կանգնելով մարդը կ'կախէին։ Վերջապէս Գրանսայի քանի մը գաւառներ մինչև 15դ դար շնութեան գործին մէջ գտնուող այր ու կինն կ'դատապարտուէին՝ մերկանգամ քալել քաղքին մէկ ծայրէն միւս ծայրը, կէսօր ժամանակ։

Օտարական մը կ'հարցնէր սպարտայիի մը թէ ի՞նչ պատիժ կ'տնօրինեն շնութեան մէջ գտնուող մարդու և կնոջ դէմ իր երկրին մէջ։ «Կը դատապարտեն զանոնք, ըսաւ սպարտային, յուլ մը գտնել որ՝ Տայիկտի լեռնէն Էրոտասի դետը ջուր խմելու կարողանայ։» Եւ ի՞նչպէս կարելի է այդ մեծութեամբ յուլ մը գտնել։ — Եւ սակայն նուազ դժուարին է այդ, պատասխանեց սպարտային, քան թէ Սպարտայի մէջ շնացող մը գտնել։

ԻՎԱՆՕԷ

— Իրաւունք ունիս, քաջդ — պատասխանեց Ռիչարտ — և եթէ մէկ կողմն Իվանօէն ունենայի՝ իրրև խորհրդատու, և իր խորհրդոց իրրև փաստ իր Ճակատին արտմութիւնը, և միւս կողմն քեզ, իմ յատուկ ղուստս կարծած բանիդ համար ղիս խաբելու, այն ատեն քրիստոնեայ թագաւորաց մէջ ամենէն անազատը պիտի լինէի։ Բայց, բարեկամներ ծն, երթանք, Գոնինկսպրրկ դնալու ոտք ելնենք, և այս խօսքին վերջ տանք։

Ռօպէն Հուտ ապահովցուց զամէնքն որ իրենց բռնելիք Ճամբուն վրայ իր մարդիկներէն խումբ մը դրկած է, որոնք անտարակոյս երևան պիտի հանեն և յայտնեն եթէ դաղտնի դարան մը կայ. և թէ անկասկած էր որ Ճամբան անվտանգ պիտի ընեն, կամ, եթէ վտանգ կայ ժամանակին աղդարարութիւն ստանալով՝ կարող պիտի լինին նահանջել և դունդ մ՝ աղեղնաւորներու վրայ կռթնիլ, որոց հետ ինքն հեռուէն թագաւորին հետևելու կ՝մտադրէր։

Թագաւորն իր ապահովութեան համար Ռօպէնի առած այս խոհական զգուշութիւնները լսելով՝ սիրտը շարժեցաւ և վտարակաց պարագլխին անմեղ խաբէութեան վրայ զգացած թեթև սրտմտութիւնն իսկ փարատեց։ Վերստին իր ձեռքը կարկառեց Ռօպէն Հուտի, ապահովցուց որ կատարեալ ներողութիւն կ՝շնորհէ անոր և ապագայ արտօնութիւններ, որ նպատակ պիտի ունենան անտառային բուռն օրէնքը մեղմել, որով շատ մը անկլիացի ղեղականներ ապստամբելու սպիտուեր էին։ Բայց Ռիչարտի պատուական խորհուրդներն իր տարաժամ մահուամբն ի դերև ելան, և Անտառայ Դաշինքն Ճօհն թագաւորին ձեռքէն խլեցին միայն, երբ իր դիւցազնական եղբօրը յաջորդեց։ . . . Վտարակին կարծիքը Ճշմարիտ ելաւ. և թագաւորն՝ Իվանօէի, Պիրթի և Վամպայի ուղեկցութեամբ՝ անարգել հասաւ Գոնինկսպրրկի դղեկին առջև՝ երբ արևը տակաւին հորիզոնին վրայ էր։

Անկլիոյ մէջ այս սաքսօնեան հին բերդին մօտ գտնուած բնական տեսարաններուն պէս դեղեցիկ կամ հրապուրելի տեսարան քիչ կայ։ Մեղմ և հեզասահ Տօն գետն ամփիթատրոնի մը մէջէն կ՝հոսի, ուր մշակեալ հողեր անտառուտ վայրերու հետ կ՝խառնուին, և բլրի մը վրայ, որ դետին եզերքէն վեր կ՝ելնէ, և պատերով ու փոսերով պաշտպանուած է, հին դղեակը կ՝բարձրանայ։ Այս դղեակն՝ ինչպէս որ անունէն կ՝իմացուի, աշխարհակալութենէ առաջ Անկլիոյ թագաւորներու մէկ բնակարանն էր։ Հաւանօրէն արտաքին պատերը նորմանները շինել տուած լինին, սակայն ներքին աշտարակը հնութեան նշանները

կ'կրէ։ Այս աշտարակը բարձրութեան մը վրայ՝ ներքին պատին մէկ անկիւնը շինուած է, և շուրջ քսան հինգ ոտք տրամագիծ ունեցող շրջանակ մը կ'յօրինէ։ Պատերն ահագին թանձրութիւն մ'ունին և բռնուած են վեց խոշոր աղեղնաձև յենարաններով որ շրջանակին դուրս կ'ժայթքին և աշտարակին կողերուն վրայ կ'կռթնին անոր ամրութիւն կամ նեցուկ տալու համար։ Այս ամրակուռ յենարաններն հաստատուն են երբ հիմունքն 'ի վեր կ'ելնեն և բաւական կ'բարձրանան, սակայն կատարին կողմը դոգաւոր կ'դառնան և տեսակ մը փոքր աշտարակներու կ'հասնին որ նոյն իսկ ներքին բերդին հետ հաղորդակցութիւն ունին։ Այս ստուար շէնքն՝ իր այլանդակ մասերով 'ի հեռուստ այնպիսի տեսք մ'ունի որ ոչ միայն նկարագրեղ տեսարաններու սիրահար մարդոց, այլև հետազնին հնագիտին աչաց համար դղեկին ներքին կողմը հետաքրքրաշարժ է, ըստ որում իր երևակայութեամբը կրնայ Եօթնապետութեան ժամանակները թուիլ։ Դղեկին մօտ հողաբլուր մը կայ՝ որու համար կ'ըսեն թէ հուչակաւոր Հէնկիստի դերեզմանն է և շատ հետաքրքրական և հին յիշատակներ կ'տեսնուին նաև մօտակայ դերեզմանատան մէջ։

Երբ Առիւծասիրտ Ռիչարտ և իր հետևակներն՝ այս կոշտ այլահարիու շէնքին մօտեցան, ինչպէս այժմ՝ արտաքին ամրոցներով շրջապատուած չէր։ Սաքսոն Ճարտարապետն իր արհեստին բոլոր հնարքը գործածեր էր ներքին բերդն անառիկ գործելու և շուրջն ուրիշ պատնէշ չունէր բայց եթէ կոշտաբար շինուած քանի մը պատուարներ։

Աշտարակին ծայրը սատանող ահագին սև դրծշակէ մը կ'իմացուէր որ սոյն դղեկին վերջին տիրոջ յուղարկաւորութեան հանդէսը պիտի կատարէին։ Այս դրօշակը հանդուցեալին ծննդեան և աստիճանին նշանը չէր կրեր, վասն զի՝ նոյն իսկ նորման ասպետներու մէջ անդամ զինադրոշները նորութիւն մ'էին տակաւին, իսկ սաքսոններու բոլորովին անծանօթ։ Բայց մեծ դրան վրայ ուրիշ դրօշակ մը կար՝ որու վրայ կոշտաբար նկարուած սպիտակ ձիու մը դէմքը կ'տեսնուէր, և այս էր Հէնկիստի և իր սաքսոն մարտիկներու քաջածանօթ նշանակը։

Դղեկին չորս կողմը խառն ու շփոթ շարժում և աղմուկ կար. վասն զի այնպիսի դամբանական խնջոյքներ ընդհանուր և շուայլ հիւրընկալութեան առիթներ էին, որու հրաւիրուած էին ոչ միայն հանդուցեալին հեռաւոր ազգականները, այլ որ և է անցորդներ։ Վաղճանեալ Ամբէլտէյնի հարստութիւնն ու աստիճանը սոյն նոյնութիւնները կէտ ու կէտ պահելու ստիպեր էին։

Ուստի բազմաթիւ մարդիկ կ'ելնէին և կ'իջնէին այն բլրէն որու վրայ շինուած էր դղեակը. և երբ թագաւորն ու իր մարդիկն արտաքին պատուարին բաց և անպաշտպան դռներէն ներս մտան, իրենց աչաց այնպիսի տեսարան մը ներկայացաւ որ դժուարին էր սոյն խնջոյից պատճառին հետ համաձայնել։ Ասդին՝ խոհակերներ արիւն քիրտ կը թափէին որ ահագին կուլեր և դէր ոչխարներ խորովեն, անդին՝ դաբեջրի տակառներ կ'բանային որպէս զի ըստ հաճոյս ով որ ներս գայ խմէ։ Ամէն տեսակ մարդկան խմբակներ կերակուրը կ'լափէին և աղաւորէն իրենց ուզածին չափ ընտրելի կ'կլլէին։ Այն տեղ մերկ սաքսոն ստրուկն իր կիսամեայ անօթութիւնն ու ծարաւը կ'անցընէր մէկ օրուան օրկրամոլութեամբ և դինովութեամբ։ Յոյր ոստանիկն ու մեծայտ վաճառականն ամենէն փափուկ պատառն ախորժանօք կ'ուտէր, կամ հետաքրքրութեամբ կ'քննադատէր դարեջրին տեսակն ու դարեջրի վաճառականին վարպետութիւնը։ Սակաւաթիւ նորման ազնուականներ ևս կային անդ, որոնք դիւրաւ կ'ճանչցուէին իրենց դերծուած կզակէն և կարճ վերարկուէն, որոնք իրարու մօտ մեկուսի վեցեր էին և արհամարհ աչօք կ'դիտէին այս հանդէսը, թէև առատօրէն դրուած պատուական կերակուրներ ուտելու կ'հաճէին։

Աւելորդ է ըսել թէ նոյն վայրը հարիւրաւոր մուրացկաններ ալ կային, նոյնպէս Պալեստինէն դարձած թափառական զինուորներ, զէթ իրենք այսպէս կ'ըսէին։ Շրջուն փերեզակներ իրենց ապրանքը կ'ցուցընէին, ուղևոր գործաւորներ գործ կ'փնտռէին, դատարկապորտ ուխտաւորներ, լեռնական քահանաներ, սաքսօն վիպասաններ և վէրշեղ քերթողներ աղօթներ կ'մրմնջային և իրենց սանդուղէն, կիթառէն և ջուրթակէն անախորժ ձայներ կ'հանէին։ Մին՝ Ամբլստէյնի գովեստը կ'երգէր սիրապէս ներբողմ'ըսելով, ուրիշ մը՝ սաքսօն լեզուաւ՝ ազգաբանական քերթուած մը կ'նուագէր և անոր ամենիւ նախնեաց խորթ և անտաշ անունները կ'կրկնէր։ Այս ամբոխին մէջ մխիթարներ և ձեռնածուներն ալ պակաս չէին, և այս պալի ժամուն՝ բոլոր հանդիսականներն անոնց կ'նայէին առանց անոնց այս արհեստն անվայել կամ դժպատեհ սեպելու։ Իրաւի՝ սաքսօններու դաղափարներն՝ այսպիսի պարագաներու մէջ՝ որչափ բնական նոյնչափ կոշտ էին։ Եթէ վիշտը ծարաւի էր՝ խմելիք կար, եթէ սիրտը վշտաթեկ կ'ճնշուէր՝ նոյն տեղ խնդութեան, զէթ զուարճութեան միջոցներ կային։ Հանդիսականները սոյն մխիթարական նշանները սփոփելու չէին մերժեր, թէև մերթ ընդ մերթ՝ մարդիկ՝ որպէս թէ սոյն դուսարման բուն շարժառիթը յիշելով միա-

ձայն ողբալու կ'սկսէին, մինչդեռ կիները՝ որ բազմաթիւ էին, իրենց ձայնը բարձրացընելով՝ ողբ ու կոծ կ'արձակէին։

Գոնկոսպերվի դղեկին դատին մէջ այս այլանդակ տեսարանը կ'անցնէր՝ երբ Ռիչարտ և իր հետևորդները ներս մտան։ Մատակարարը չէր դիջաներ ատորին կարգի խումբերու անընդհատ ելքն ու մուտքը դիտելու, այլ միայն եթէ հարկ լինէր կարգ կանոն պահել տալ։ Սակայն Թագաւորին և Իվանհոէի ազնիւ կերպարանն իր ուշադրութիւնը գրաւեց, նա մանաւանդ երբ նկատեց որ վերջնոյն դէմքն իրեն ընտանի կ'երևէր։ Ասկից զատ՝ երկու ասպետներու դալուստն, որոնք իրենց հագուստէն կ'մանանուէին, հաղուագիւտ բան մ'էր սաքսոնեան հանդիսի մը մէջ, և հետևապէս մեծ պատիւ մը կ'սեպուէր այս այցելութիւնը հանդուցելոյն և դերդաստանին համար։ Այս կարևոր անձը՝ սևեր հագուած և իր պաշտօնին սովորական ցուցը ձեռքը բռնած այցելուներու բազմութեան մէջէն Ճամբայ մը բացաւ և Ռիչարտն ու Իվանհոէն մինչև աշտարակին մուտքն առաջնորդեց։ Կիւրթ և Վամբա բակին մէջ խնոյն ծանօթներ գտան, չհամարձակեցան աւելի ևս առաջ դնալ և սպասեցին որ ներս կանչուին։

ԳԼՈՒԽ ԽԹ

Ցեսպ զանոնք որ Մարսէլոի մարմինը կ'պատանքէին։
Եւ կար անդանօր մի այնպիսի մեղեդի հանդիսաւոր,
Երգերու, արտասուքի և ողբ ու լալիւնի —
Որպէս պառաւ կիներ աշխարհեն երբ մեռելի մօտ,
Ու բոլոր դիշեր անդուլ հսկելով կ'անցնեն ժամեր։

ՀԷՆ ԽՈՂ։

Գոնկոսպերվի մեծ աշտարակը մտնելու Ճամբան շատ նշանաւոր է և իր շինութեան նախկին ժամանակներու անոպայ պարզութեան դրոշմը կ'կրէ։ Աստիճաններու շարք մը, այնքան խոր և նեղ որ գրեթէ սեպաձև կ'երևի, աշտարակին հարաւային կողմը գտնուող ցած դրան մը կը առանի, ուսկից յանդուգն հնասէրը դեռ ևս կարող է, կամ դէթ քանի մը տարի առաջ կարող էր, փոքրիկ սանդղի մը համանիշ աշտարակին մեծ պատին վրայ բացուած, որ շինքին երրորդ դատիկոնը կ'առաջնորդէ։ Երկու ատորին դատիկոնները նկուղներ կամ կամարներ են, որ ոչ օդ ոչ

յոյս կ'ընդունին, բայց 'ի քառակուսի ծակէ մ'որ երրորդ դստիկոնին վրայ կ'տեսնուի, որու հետ կ'երևի թէ հաղորդակցութիւն ունի ենսրանի մը միջոցաւ։ Աշտարակին վերնագոյն սենեակներն ենելու համար, որ ընդ ամէնը չորս դստիկոն ունէր, արտաքին կամարակալներու մէջ շինուած սանդուղներ կային։

Ահա այս դժուարին և կնճռոտ ճամբէն էր որ Ռիչարտ բարի թագաւորը՝ իր հաւատարիմ Իվանհոէի ընկերութեամբ երրորդ դստիկոնը բոլորովին բռնող բոլորակ սենեկէն ներս մտցուցին։ Վիլֆրիտ այս ելքին դժուարութենէն ժամանակ դտաւ իր դէմքը վերարկուովը ծածկելու, և այս միջոցը գործածեց որ հօրը չյայտնուի մինչև որ թագաւորն իրեն նշան չընէ երևան ելնելու։ Այն սենեկին մէջ, կարելի մեծ սեղանի մը բոլորը նստած էին մօտակայ գաւառներէն եկող սաքսոն գերդաստաններու ամենէն երևելի ներկայացուցիչները։ Ամէնքը ծերունի, դէթ արբուն մարդիկ էին, վասն զի նոր սերունդը, 'ի մեծ դժգոհութիւն հիներուն, Իվանհոէին պէս՝ տապալեր էին շատ մը պատանէշներ՝ որ կէս դարէ վեր՝ յաղթողնորմանները յաղթեալ սաքսոններէն կ'զատէին։ Այս պատկառելի մարդոց ակնկոր և վշտահար նայուածքը, իրենց լռութիւնն և սգալի դիրքը նշանաւոր հակապատիկեր մը կ'ընծայէին դղեկէն դուրս դանուող մարդոց խնդութեան հետ։ Իրենց ալեխառն մազերը, իրենց երկար մօրուքը, նոյնպէս իրենց հին պատմուճանն և թոյլ սև վերարկուն շատ կ'յարմարէին իրենց նստած սենեկին եղական և անտաշ ձևին հետ, և անոնց Վօտէնի հին երկրպագուներուն խումբի երևոյթը կ'տային, որպէս թէ իրենց ազգային գաւառքն ողբալու համար վերածներ էին։ Թէև Սէտրիկ իր քաղաքացիներուն հաւասար կարգը նստեր էր, սակայն՝ ամենուն հաւանութեամբ՝ ժողովին իրրև նախագահը կ'գործէր։ Երբ Ռիչարտ ներս մտաւ (որ իրեն ծանօթ էր միայն իբրև երկաթէ Կղզակի ասպետ) Սէտրիկ ծանրօրէն ոտք ելաւ, և անոր բարև տուաւ սովորական waes hael ըսելով, միանգամայն կոյժ մը մինչև գլուխը տանելով։ Թագաւորն՝ որ անվարժ չէր անկլիացի հպատակացը սովորութեանց, փոխադարձ բարև տուաւ drink hael սովորական խօսքն արտասանելով, և մատուակին կողմէն իրեն տրուած բաժակն առաւ։ Մի և նոյն մարդավարական մաղթանքն եղաւ նաև Իվանհոէին, որ փոխադարձը մատոյց իր հօրը լռութեամբ, և որպէս զի իր ձայնէն չմատնուի՝ փոխանակ խօսելու՝ գլուխը ծռեց։ Երբ այս նախաբան արարողութիւնը լմընցաւ, Սէտրիկ ոտք ելաւ, և ձեռքը Ռիչարտի տալով՝ փոքրիկ և կոշտ մատուռ մը տարաւ որ կեր-

պով մը արտաքին կամարակալին մէկուն մէջ փորուած էր։ Որովհետուրիշ բացուածք չկար բայց միայն նեղ լուսամուտ մը, այս վայրը բոլորովին 'ի մթան սիտի մնար եթէ երկու կանթեղ կամ ջահ չվառէին, որոց կարմրուն և ծխոտ լոյսէն կ'երևէին կամարաձև ձեղունն, մերկ պատերը, քարաշէն խորանն և նոյն նիւթէն անտաշ խաչը։

Այս խորանին առջև դպաղ մը դրուած էր, և սոյն դպաղին ամէն մէկ կողմն երեք քահանայ ծունր կրկներ էին, և վարդապան քաշելով արտաքին ջերմեռանդութեան ամէն նշաններով իրենց աղօթքը կը մրմնջէին։ Այս պաշտաման համար սուրբ Էտմոնդի վանուց փառաւոր պարգև մը տրուեր էր հանդուցեալին մօրը կողմէ, և որպէս զի պաշտօնը շքեղօրէն կատարուի, բոլոր վանականք, կաղ լուսարարէն զատ, Գօնինկսպերգի եկեղեցին։ Վերջապէս Ամելսաէնի դպաղին մօտ շարունակ վերջին արարողութիւնները կատարելու ատեն, միւսները դղեկին մէջ տեղի ունեցած զուարճութեանց և խնջոյից մասնակից լինելու չէին դադարեր։ Մինչդեռ այս բարեպաշտական կոչումն և պահպանութիւնը կ'կատարէին՝ բարի վանականները յատկապէս ուշադիր էին պահ մ'իրենց ժամերգութիւնը չընդհատել, առ ահի որ Զէրնոպօք, սաքսօնեան հին սադանը, Ամելսաէնի դիակին վրայ իր Ճիրանները չդնէ։ Նոյնպէս հոգ կ'տանէին որ անսուրբ աշխարհական մը դպաղին ծածկոյթին չդպչի, դպաղ մ'որ սուրբ Էտմոնդի յուղարկաւորութեան գործածուած լինելով նոր իրական կ'սեպուեր . . . . Բիչարտ և Ալիֆիրիտ մեռելի սենեակն երթալու համար տաքսոն Սէարիկին ետեւէն դպչին, որ հանդիսաւոր կերպով Ամելսաէնի դիակը ցոյց տալուն՝ երկու հիւրերը խաչ հանեցին և հանդուցեալին հոգւոյն համար կարճ աղօթք մ'ըրին։

Այս բարեպաշտական գործը կատարելէն ետև՝ Սէտրիկ վերստին նշան ըրաւ անոնց որ իրեն հետևին, և անշշուկ քայլով քանի մ'աստիճանք վեր ելնելէ ետև՝ մեծ զգուշութեամբ մատորան պատկից փոքրիկ աղօթարանի մը դուռը բացաւ։ Շուրջ ութ քառակուսի ոտք տարածութիւն ունէր, և մատարան պէս հաստ պատին մէջ շինուած էր։ Տեսակ մը խիստ նեղ լուսամուտ մ'որ այս աղօթարանը կ'լուսաւորէր և ներքուստ կ'լայնար, մարը մտնող արևուն նշոյլները կ'ընդունէր նոյն պահուն, և երևան կ'հանէր աղնուադէմ կին մը, որու կերպարանը վաղեմի փառաւորութեան մը նշանները կ'կրէր։ Իր սուրի երկայն շրջազգեստն և ծփուն սև քօղն իր կաշին սպիտակութեան և դեղձան գիսակներուն աւելի փայլ կ'ընծայէին, որոնք ժամանակէն ոչ անօսրեր

և ոչ Ներմիեր էին։ Իր կերպարանը կ'յայտնէր խորին տրտմութիւն և համբերատար ջերմեռանդութիւն։ Իր առջևը՝ քարէ սեղանի մը վրայ փղոսկրեայ խաչ մը կար, ասոր մօտ դրուած էր խորհրդատեար մը՝ որու երեսները պերճօրէն դունաւորուած, ծայրերն ոսկի ճարմանդով և նոյն թանկագին մետաղէ դրուագներով զարդարուն էին։

— Ազնիւ Էտիթ — ըսաւ Սէտրիկ՝ պահ մը լուռ կենալէն ետև, որպէս թէ Ռիչարտի և Վիլֆրիտի ժամանակ տալ կ'ուզէին որ դղեկին տիրուհին տեսնեն — ասոնք ընտիր օտարականներ են որ ձեր վշտայ մասնակից լինելու եկած են։ Եւ այս անձը՝ մասնաւորապէս՝ այն արիասիրտ ասպետն է որ այնքան քաջութեամբ կռուեցաւ մեր այսօրուան ողբացած անձին ազատութեան համար։

— Իր քաջութիւնն իմ շնորհակալութեան արժանի է — պատասխանեց տիկինը — թէև Աստուծոյ կամքն էր որ անարդիւն մնայ։ Նոյնպէս շնորհակալ եմ և իր ընկերին մարդասիրութեան համար որ դիրենք այս տեղ Ատլին այրի կնոջ, Աթէլստէյնի մօրը քով առաջնորդեց այս տրտմութեան և ողբոց ժամանակ։ Բարեսիրտ ազգականս, ձեր խնամոյ կ'յանձնեմ զանոնք, վստահ լինելով որ այս տխուր դղեկին մէջ պէտք եղած ասպնջականութիւնը պիտի գտնեն։

Հիւրերը խորին խոնարհութիւն մ'ըրին լալագին մօր առջև և իրենց հիւրասէր առաջնորդին հետ հեռացան։

Ուրիշ բոլորակ սանդուղք մ'իրենց առջևէն մնած սենեկին մեծութեամբ սրահ մը մտան որ վերին դատիկանն էր։ Դուռը բացուելէն առաջ՝ նոյն սենեկէն ծանր և մելամաղձիկ երգի մը մրմունջը լսեցին։ Երբ ներս մտան՝ սարսռնեան տոհմէ քսանի չափ ազնիւ տիկիններ և օրիորդներ տեսան։ Զորս օրիորդներ՝ որոց գլուխն էր Ռովէնա, հանդուցեալին հոգւոյն համար շարական մ'երգեցին, որու միայն երկու երեք տուները կարող եղանք գտնելու։

Հող ենք և 'ի հող
Տի դառնանք անշուշտ.
Քու ձև կորնչական
Առիր մարդ հողածին.
Որդոց տի լինիս կուր
Ապականն յապական։
Ուղիներէն անյայտ
Քու հոգիդ սրայաւ,
Խնդրելու վայր վշտայ,
Ուր տանջանք անհնարին
Տի սրբեն քո արատ
Աստի յանցանացդ։
Ի վայր այն տխրագին,
Թող շնորհիւ Տիրամօր,
Կարձանայ քո դաղար,
Մինչ դի դուխ ու աղօթք
Եւ սաղմոսք սրբանուէր
Աղատեն դերիդ սպառ։

Մինչդեռ Նորատի օրիորդաց դասն այս սգալի երգը կ՚երգէր ծանր ու մելամաղձիկ ձայնով, միւս կիներն երկու մաս բաժնուած՝ մին՝ իր բոլոր ճաշակն ու ճարտարութիւնը թափելով Ամէլստէյնի դպաղը ծածկելու սահմանուած սեւ ասոի մը պճնազարդ գործելու կ՚զբաղէր, և միւս մասը՝ իր առջև դրուած զամբիւղներէ ծաղիկներ քաղելով նոյն սգալի նպատակին համար պսակներ կ՚յօրինէր։ Նորատի աղջիկներու ընթացքն եթէ ոչ խորին տրտմութեան, դէթ վայելչութեան նշաններն ունէր. բայց երբ ատեն ատեն իրենց կողմէ մրմունջմը լսուէր կամ ժպիտ մ՚երևէր, ամենէն խիստ տիկիններէ սաստ կ՚ընդունէին. իսկ տաղիս անդին կ՚տեսնուէր օրիորդ մ՚որ աւելի զբաղած էր քննելու թէ արդեօք իր սև լաթերն իրեն կ՚վայլե՞ն, քան թէ այն տխուր արարողութիւնն որու համար կ՚պատրաստուէին։ Եթէ հարկ է ճշմարտութիւնը խոստովանիլ, պարտինք ըսել թէ աղջկանց այս խնդալու հակումը չպակսեցաւ ամենևին երկու օտար ասպետներու գալովն, գալուստ մ՚որ ամենուն աչքը վեր վերցընել, դաղտն ու գոդի նայիլ և փսփսալ տուաւ։ Բովէնա միայն՝ որ հպարտութենէն մնապարծ չէր, շնորհալի մարդավարութեամբ բարևեց իր աղատարարը։ Իր կերպարանն ծանր էր առանց չափազանց տրտմութեան, և կասկածելի էր թէ արդեօք Իվանօէի վրայ մտմտուքն և իր բաղդին անստուգութիւնն աւելի իրեն ծանր վարմունք մը կ՚տային քան թէ իր ազգականին մահը։

Իսկ Սէտրիկ, որ՝ ինչպէս արդէն ըսինք՝ շատ հեռատես չէր այսպիսի պարագայից մէջ, իր սանին տրտմութիւնն այնքան աւելի ծանր գտաւ միւս օրիորդաց տրտմութենէն, որ յարմար դատեց ըսելու թէ՝ «Բովէնա ազնիւ Ամէլստէյնի նշանածն էր։» Ընթերցողը կրնայ երևակայել թէ՝ այս տեղեկութիւնն կրնար Գոնինկսպըրկի սգաւորներու վշտակից դասնուելու համար Իվանօէի տրամադրութիւնն աւելցընել։

Այսպէս Սէտրիկ հիւրերն այլև այլ սենեակներ տանելէն ետև, ուր Ամէլստէյնի յուղարկաւորութեան հանդէսը կատարելու համար կերպ կերպ պատրաստութիւններ կ՚տեսնուէին, առաջնորդեց ղանոնք փոքրիկ խուց մ՚որ, ինչպէս ինք յայտնեց, պատուաւոր հիւրերու սահմանուած էր միայն, որոնք հանդուցելոյն հետ սերտ յարաբերութիւն չունենալով թերևս չէին ուզեր միանալ այս տխուր դէպքէն ուղղակի դգացուած անձերու հետ։ Հաւաստեց անոնց որ բան մը չպիտի պակսի իրենց հանգստութեան համար, և քաշուելու վրայ էր երբ Սև ասպետն անոր ձեռքէն բռնեց։

— Ազնիւ տանտէր, ներեցէք ինձ ձեր ուշն ածելու — ըսաւ նա —

որ երբ մենք վերջին անգամ մեկնեցանք, խօսք տուի՞ք ինձ՝ ձեզ ըրած ծառայութեանս փոխարէն չնորհ մ՚ընել ինձ։

— Ազնիւ ասպետ — պատասխանեց Սէտրիկ — դուն չյայտնած ձեր խնդիրը կատարած համարեցէք, սակայն այս տխուր ժամուս . . . ։

— Ես ալ մտածեցի այդ բանը — ընդմիջեց Թագաւորը — բայց ժամանակս սուղ է, և սակայն բարեպատեհ ժամ մը կ՚թուի ինձ որ, երբ ազնիւ Ամէլստէյնի կերեզմանը պիտի գոցուի, անոր մէջ Թաղենք նաև քանի մը նախապաշարումներ և կանխակալ կարծիքներ։

— Սև ասպետ — ըսաւ Սէտրիկ կարմրելով և ըստ կարգի Թագաւորին խօսքն ընդհատելով — յուսամ՝ որ խնդիրը չէ Թէ ուրիշի այլ ձեղի կ՚պատկանի, վասն զի իմ տանս պատուոյն վերաբերող գործի մ՚անվայել է որ օտարական մը միջամտի։

— Ես ալ չեմ կամիր միջամտիլ — պատասխանեց Թագաւորն անուշութեամբ — միայն Թէ պէտք է ընդունիք Թէ որքան համակրութիւն ունիմ ձեզի։ Մինչ ցարդ՝ զիս իբրև Սև ասպետ ճանչցած էք, այժմ իբրև Ռիչարտ Բլանդաժնէդ ճանչցիր զիս։

— Անժուի՛ Ռիչարտը — գոչեց Սէտրիկ զարմանօք ընկրկելով։

— Ո՛չ, ազնիւ Սէտրիկ, Անկլիոյ Թագաւոր Ռիչարտ, որու ջերմ փափաքը, որու ջերմաջերմ իղձն է իր որդիքն իրարու հետ կապուած տեսնել։ Լաւ ուրեմն, ազնիւ ազգասէր, միթէ քու Թագաւորիդ առջև ծունր չպիտի կրկնես։

— Երբէք ծունր չեմ կրկնած նորմանի մ՚առջև — ըսաւ Սէտրիկ։

— Ուրեմն յարգանքդ վերապահէ — ըսաւ Թագաւորը — մինչև որ՝ի փորձ հաստատեմ Թէ անոր արժանի եմ՝ հաւասարապէս պաշտպանելով նորման և անկլիացի հպատակներս։

— Իշխան — պատասխանեց Սէտրիկ — ես միշտ քու արիութիւնդ և արժէքդ յարգած եմ։ գիտեմ նաև իրաւունքդ Թագին՝ իբրև սերունդ Մարթիլտի, որ Էտգարտ Էթլինի եղբօրաղջիկն և Սկոտիոյ Մալքոմի դուստրն էր . . . ։ Բայց Մաթիլտ՝ Թէև արքայական տոհմէ, սաքսոնեան իշխանութեան ժառանգուհի չէր։

— Ես քեզի հետ իմ իրաւանցս վրայ վիճել չեմ կամիր աստանօր, ազնիւ ազգապետ — ըսաւ Ռիչարտ հանդարտութեամբ — բայց պիտի խնդրեմ որ բոլորտիքդ նայիս և տեսնես Թէ ուրիշ իրաւունք մը պիտի գտնես իմինիս դէմ դնելու։

— Եւ միթէ այս խօսքե՞րն ըսելու համար, իշխան, ասա՛ եկար — ըսաւ Սէտրիկ։ — Եկար որ ազգ առնես ինձ իմ ցեղիս կործանումն,

ապաքսոնեան թագաւորութեանը յետոյն շատ խղին վրայ դեռ ես գերեզմանին քարը չդրուած — իր դէմքը կ'մթանար այսպէս խօսելու ատեն։ — Այս մեծ յանդգնութիւն, մեծ ժպրհութիւն է քու կողմէդ։

— Այդպէս չէ, սուրբ խաչ վիրայ — պատասխանեց թագաւորը։ — Ես անկեղծ և ազատ վստահութեամբ խօսեցայ, ինչպէս որ ուղիղ մարդ մը պարտ է խօսիլ ուրիշի մը առանց ամենաթեթև վտանգի։

— Դու իրաւունք ունիս, վեհափառ թագաւոր. վասն զի կ'խոստովանիմ որ դու թագաւոր ես և իմ տկար դիմադրութեանս չնայելով միշտ պիտի լինիս։ Զեմ իշխեր զայն արդիլելու համար միակ միջոցին դիմել, թէեւ այդ զօրաւոր զրգիռն իմ ձեռացս ներքեւ դրիր։

— Հիմակ իմ խնդրոյս դառնանք — ըսաւ թագաւորը — զայն կը պահանջեմ միշտ վստահութեամբ որպէս թէ իմ օրինաւոր վեհապետութիւնս ճանչելու մերժած չլինէիր։ Քեզնէ կ'պահանջեմ իբրեւ խօսքի տէր և պատուոյ մարդ սեպելով քեզ, և եթէ չես կամիր որ անհաւատարիմ, ուխտադրուժ և վատանուն երևիս իմ առջև, կ'պահանջեմ որ ներես։ Պիտի խոստովանիս որ այս հաշտութեան մէջ շահ մը ունիմ, այս է իմ բարեկամիս երջանկութիւնն և իմ հաւատարիմ ժողովրդեան մէջ երկպառակութեան դադարումը։

— Ուրեմն այս ընկերակիցդ է Վիլֆրիտ Իվանովէն — հարցուց Սէտրիկ իր որդին ցոյց տալով։

— Հայր իմ, հայր իմ — ըսաւ Իվանովէ Սէտրիկին ոտքն ընկնելով — շնորհէ ինձ ներողութիւնդ։

— Իմ ներողութիւնս ունիս, որդեակ իմ — վրայ բերաւ Սէտրիկ զանի վերցընելով։ — Հիրվարտի որդին իր խօսքը կ'յարգէ, թէեւ այս խօսքը նօրմանի մը տուած լինի։ Բայց պէտք է որ քու անկլիացի նախնեացդ հաղուստը վերստին հագնիս. չեմ ուզեր տեսնել վրադ կարճ վերարկու, զարդարուն գդակ, և ոչ այլանդակ փետուրներ իմ համեստ տան մէջ։ Այն որ կ'փափաքի Սէտրիկի որդին լինիլ պէտք է որ անկլիացի նախնեացը հաւատարիմ երևի։ Դու խօսիլ կամիս — յարեց նա խստութեամբ — և ես կ'զուշակեմ ընելիքդ։ Պէտք է որ օրիորդ Բովէնան երկու տարի սուգ պահէ 'ի յիշատակ իր նշանածին։ Բոլոր մեր սաքսոն նախնիքը մեզ պիտի ուրանան եթէ երևենք այժմէն կարգելու այն օրիորդն, մինչդեռ այն անձին ղերեզմանն որու հետ պիտի ամուսնանար, այն որ այնչափ արժանի է իրեն թէ ծննդեան և թէ աղնուականութեան կողմէ, հապա թէ դոյցուած է։ Աթէլստէյնի ուրուականն իր պատանքը պիտի մերկանար և մեր առջև պիտի երևէր իր յիշատակին լինելիք այսպիսի նախատինք մ'արգիլելու համար։

Այնպէս իմն կ'երևէր որ Սէտրիկի խօսքն ուրուական մը կոչեցին-վան զի այն ինչ այս խօսքն արտասանեց որ դուռն ինքնին բացուեցաւ, և Աթէլստէյն՝ գերեզմանական հագուստով զարդարուած, անոնց առջև կանգնուն կեցաւ՝ դունատ, դաժան և դժոխքէն ելնող մեռելի մը պէս։*

Այս երևոյթին տպաւորութիւնը ներկայ գտնուող անձերու վրայ ահարկու եղաւ։ Սէտրիկ սենեկին պատին ներածին չափ ետ ետ քաշուեցաւ լեզապատառ և անոր կռթնեցաւ իբրև մարդ մ'որ չէ կարող ոտքի վրայ կենալ, և իր բարեկամին նայելով այնպիսի աչերով որ անթարթ կ'երևէին և բերանով մը զոր գոյելու անկարող էր։ Իվանոէ խաչ հանեց, սաքսոն, լատին և նորմանդական լեզուաւ աղօթք ընելով՝ ինչպէս որ յուշը կ'դար խառն 'ի խուռն, մինչդեռ Ռիչարտ հետզհետէ կ'ըսէր լատին և գաղղիական լեզուաւ. Benedicité! և կ'երդնուր. Mort de ma vie!

Նոյն պահուն սանդղին ոտքը սոսկալի աղմուկ մը լսուեցաւ. ոմանք կ'ըսէին. — Բռնեցէք մատնտու կրօնաւորները — այլք — Շուտ նկուղն իջեցուցէք — վերջապէս ուրիշներ — Բարձրագոյն սպարիսպներէն վար նետեցէք։

— Յանուն Աստուծոյ — գոչեց Սէտրիկ խօսքն ուղղելով այն ստուերին որ իր մեռեալ բարեկամին ուրուականը կ'երևէր։ — Եթէ մահկանացու ես՝ խօսէ, եթէ ոգի ես՝ ըսէ մեզ թէ ինչ պատճառաւ մեզի նորէն այցի կ'գաս. կենդանի կամ մեռած, ազնիւ Աթէլստէյն, խօսէ Սէտրիկին, ինչ կրնամ ընել հոգւոյդ հանգստութեան համար։

— Պիտի խօսիմ — ըսաւ ուրուականը — երբոր քիչ մը շունչ առնում՝ և դու ալ ժամանակ տաս։ Եթէ կենդանի եմ, հարցրնեա դու. կենդանի եմ, այո, որչափ որ կարող է լինիլ մարդ որ երեք օր, որ երեք դար կ'երևին, չոր հացով ու ջրով ապրած է, այո, հացով ու ջրով միայն, Սէտրիկ, երկին և արքայութեան բոլոր սուրբերը վկայ. երեք ամեներկար օր կոկորդէս լաւագոյն կերակուր մ'անցած չէ, և Աստուծոյ նախախնամութեան մէկ հրաշքովն է որ ողջ մնալով ահա այժմ քեզի կ'խօսիմ։

*Աթէլստէյնի յարութիւնն՝ նոյն իսկ վիպական գործի մը մէջ, հաւանականութեան կանոնաց իբրև հակառակ դէպք ստէպ քննադատութեան առարկայ եղաւ։ Արդարև բուռն դէպք մ'է որու դիմելու ստիպուեցաւ հեղինակը՝ իր հրատարակչին և բարեկամին ազգու թախանձանաց զիջանելով, վասն զի չէր կրնար մոռնալ Նոր Աթէլստէյնի մահուան վրայ։ Վ. Ս

— Ինչպէս, ազնիւ Աթէլստէյն — գոչեց Սև ասպետը — Դօրիլսարնի կռուին վերջերը տեսայ վայրագ տաճարականն որ քեզ տապալեց, և Վամպա, ինչպէս որ կարծեր էի, յայտնեց մեզ որ դանիէդ մինչև ակռաներդ ճեղքած է։

— Պարոն ասպետ, ծուռ տեսեր ես — վրայ բերաւ Աթէլստէյն — և Վամպա սուտ խօսեր է։ Իմ ակռաներս լաւ վիճակի մէջեն և սիտի թեսնես այժմ կերակուր ուտելու ատենս։ Սակայն ապաշնորհ էր և տաճարականն, որուն սուրը ձեռքին մէջ դարձաւ այնպէս որ սուրին տափակ կողմէն հարուած մը կերայ, և նոյն հարուածն ալ ընդհարի իմ մանկլաւոլս։ Եթէ պողովատէ սաղաւարտս ունենայի, փոյթ չպիտի ընէի, և անոր հարուած մը պիտի տայի որով նահանջելու ատեն չպիտի գտներ, բայց իմ վիճակիս մէջ՝ դէտինն ընկայ՝ արդարև շնչասպառ այլ ոչ վիրաւոր։ Ուրիշ մարտիկներ երկու կողմէն տապաստ ընկան և իմ վրայ ջարդուեցան, այնպէս որ ինքզինքս դաղաղի մը մէջ դտայ (բարեբաղդաբար բայց էր) երբ աչքս բացի, և դաղաղն ալ սուրբ Իտմենտի խորանին առջև դրուած էր։ Քանի մ՝անդամ բռնկտացի, հեծեցի, բոլորովին խելքս գլուխս եկաւ, և կ՝ուզէի ոտք ելնել, երբ լուսարարն և աբբան սարսափահար՝ աղմուկը լսելով վազեցին, անշուշտ դժդոհելով որ կենդանի դտան այն մարդն որուն ժառանգորդները լինիլ կ՝յուսային։ դինի խնդրեցի, տուին ինձ, բայց անտարակոյս սաստիկ դեղած գինի լիներ դինին, վասն զի առաջուանէ աւելի խորունկ քնացայ, և բաւական ժամեր անցնելէն ետև արթնցայ։ Այն ատեն իմ թևերս պատուտած, ոտքերս այնչափ ուժով կապուած դտայ որ քանի մտածեմ դեռ ևս յօդուածներուս ցաւը կ՝զդամ։ Իմ դտնուած տեղս բոլորովին մութ էր, կարծեմ թէ իրենց անիծեալ վանքին ընդհան էր, և անկից ելած հեղձուկ ու սամուկ հոտէն դուշակեցի որ դերեզմանատուն մի էր։ Անցած դարձածին վրայ շփոթ դաղափարներ ունէի, երբ իմ դնդանիս դուռը կրչեց և երկու անդամ վանականներ ներս մտան։ Ասոնք կ՝ուզէին համոզել դիս թէ քաւարանն եմ, բայց քաջ ճանչեցի վանահօր թասուն և նուաղուն ձայնը։ Սուրբ Երեմիա, այն ձայնը չէր որով երբեմն երէի երկրորդ կատր մը կ՝խնդրէր։ շունն ինձի սեղանակից եղեր էր Ծնունդէն մինչև Թափաւորաց տօնը։

— Համբերէ, ազնիւ Աթէլստէյն — ըսաւ Թագաւորը — շունչ առ, կամաց կամաց պատմէ պատմութիւնդ։ Ճշմարիտն, այսպիսի պատմութիւն մը վիպասանութեան չափ հետաքրքրաշարժ է։

— Այո, բայց կ՝երդնում Պրօմհօմի խաչափայտին վրայ, որ վիպաս-

ման բան մը չկայ գործին մէջ — ըսաւ Ամէլսուէն։ Գարիէ նկանակ մը և թակոյկ մը ջուր, ահա ասոնք միայն տուին ինձ անզամ դաւաճանները, որ հարստացած են իմ հօրս և իմ ձեռօքս, մինչդեռ իրենց միակ սպրուսան էր ճարսի շերտեր և քանի մը գրիւ ցորեն զոր անդադար շողոքորթութիւններ ընելով խեղճ տարուկներէն կ'ստանային՝ իրենց աղօթից փոխարէն։ Ինչ անշահ և ապաշնորհ իժերու որջ մ'էր այն, ինձի պէս տիրոջմը գարիէ հաց և հորի ջուր տան։ Իրենց աղտեղի որջին մէջ պիտի ծխուեմ զանոնք, եթէ բանադրուիմ անզամ։

— Բայց, յանուն մեր Տիրամօր, աղնիւ Ամէլսուէն — ըսաւ Սէտրիկ՝ իր բարեկամին ձեռքը բռնելով — ի՞նչպէս այն մեծ վտանգէն ազատեցար։ Արդեօք իրենց սիրտը կակղեցա՞։

— Իրենց սիրտը կակղի՞— կրկնեց Ամէլսուէն։ — Մի՛թէ ժայռերն սրեւէն կ'հալի՞։ Տակաւին նոյն վայրը պիտի մնայի, եթէ վանքին մէջ շփոթութիւն մը չծագէր, երբ թափօրով գէպ 'ի այս գղեակը կ'գիմէին, ինչպէս որ իմացայ, որպէս զի իմ յուղարկաւորութեանս ճաշն ուտեն, թէև քաջգիտէին թէ մեր և ի՞նչպէս ողջողջթաղուած էի։ Եւ ահա այս թափօրին պատճառաւ վանականներն իրենց որջէն դուրս եկան։ Լսեցի անոնց երգած մեռելոց աղօթքը. չէին մտածեր բնաւ որ այն աղօթքը կ'երգէին իմ հոգւոյս փրկութեան համար անոնք որ այսպէս մարմնոյս սովամահ կ'թողուին։ Սակայն մեկնեցան անոնք, և ես, զարմանք չեն որ ընդ երկար սպասեցի որ ինձ կերակուր բերեն. կաղ լուսարարն իր որկորը պարարելու համար այնքան զբաղած էր որ իմս մոռցեր չանցաւ։ Վերջապէս՝ վար իջաւ նա երերուն քայլով, և իր վայրէն զինեի զօրաւոր հոտ մը կ'բուրէր։ Աղտոր կեր ու խումն իր սիրտն ամոքեր էր, վասն զի քաքարի աղտոր պատառ մը և պզտիկ շիշ մը զինի թողուց ինձ, իմ սովորական կերակուրիս տեղ։ Ուստի կերայ, և ոյժ առի, և ապա, իմ լաւ բաղդէս, լուսարարն՝ որ շատ արբած լինելուն չէր կրնար դռնապահի պաշտօնը լաւ վարել, դուռը կղպեց նիզը դուրս թողլով, այնպէս որ կիսբաց մնաց։ Լոյսը, սնունդը, զինին երևակայութիւնս բորբոքեցին։ Այն օղակն որու շղթաներս կապուած էին, իմ և կամ անզամ վանահօր կարծածէն աւելի ժանգոտեր էր։ Երկաթն անդամսոյն դժոխային ընդանին խոնաւութեան չէր կարող դիմանալ։

— Շունչառ, աղնիւ Ամէլսուէն — ըսաւ Բիչարտ — այդ սոսկալի պատմութիւնդ շարունակելէն առաջ քիչ մ'ինքզինքդ կազդուրէ։

— Կազդուրեմ — ըսաւ Ամէլսուէն — այսօր հինգ անզամ ոնունդ

առի. և սակայն սա համեղ ապտիտէն կտոր մը չպիտի մերժեմ. կ'ազչեմ, քաջ ասպետ, դու ալ բաժակ մը գինի շնորհէիր ինձ։

Հիւրերը՝ թէև տակաւին ապուշ կրթած էին՝ յարուցեալ տանտիրոջ խնդիրը կատարեցին, որ այսպէս շարունակեց իր պատմութիւնը։ Իրաւ է որ այժմ՝ իր ունկնդիրներն աւելի շատոր էին քան թէ երբ սկսաւ, վասն զի Էմիթ՝ իր մայրն՝ դղեկին մէջայլ և այլ կարգադրութեանց համար պէտք եղած հրամանները տալէն ետև՝ մինչև օտարականաց յատկացեալ սենեակը հետևեր էր գերեզմանէն ելնող Ամէլստէյնի, իրեն ուղեկից ունենալով այնչափ այր ու կին հիւրեր որչափ որ կարելի էր պարունակել փոքրիկ սենեկին մէջ, մինչդեռ ուրիշներ՝ սանդուղներուն վրայ խմնելով՝ պատմութիւնն կիսկատար լսեր էին և աւելի անկատար կերպով կ'աւանդէին իրենցմէ վար գտնուող անձերուն, որ դարձեալ գուրսն եղող ռամկին կ'հաղորդէին նախատիպ պատմութենէ հիմնովին տարբեր ոճով մը։ Սակայն Ամէլստէյն հետևեալ կերպով շարունակեց իր ազատութեան պատմութիւնը.

— Երբ շղթայիս օղակէն պրծայ, սանդղէն վեր ելայ այնպէս արագ որչափ որ կարող է շղթայով բեռնաւորուած և երեք օրուան ծոմապահութենէ տկարացած մարդ մը. բաւական ատեն ապիս անդին խարխարելէն ետև՝ վերջապէս ղուարթ նուագի մը ձայնը լսեցի և սենեակ մը գիմեցի ուր արժանընտիր լուսարարը, ներեցէք ինձ ըսելու, սատանայի պատարագ կ'կատարէր դաժան դէմքով, լայն ուսերով և մխրապոյն զգեստ ու կնդուղ կրող մեծ վանականի մը հետ, որ աւելի աւազակի կերպարան ունէր քան թէ եկեղեցականի։ Անոնց վրայ յարձակեցայ, և իմ գերեզմանական հագուստս, նոյնպէս շղթաներուս շաչիւնն ինձ ուրիշ քան այս երկրի բնակչի կերպարանը կ'տային։ Երկուքն ալ ապուշ մնացին. բայց երբ լուսարարը թաւալգլոր բերի բռնցի, մուսը, իր գինիի ընկերը, հատ դաւազանի հարուած մ'ուղղեց ինձ։

— Կոմսի մը փրկանքի վրայ գրաւ կ'գնեմ — գոչեց Բիչարտ՝ Իվանոէի կողմը դառնալով — որ այն մարդը մեր Գրք եղբայրը պիտի լինի։

— Կրողը լինի կամ ուրիշ մը, փոյթ չէ — ըսաւ Ամէլստէյն։ — Բարեբաղդօրէն չկրցաւ լաւ նշան առնուլ, և երբ անոր մօտեցայ որ հետը կռուիմ՝ շուտ մը կծիկը գրաւ։ Ես ալ իմ ոտիցս ազատութիւն տալու փութացի շղթայից բանալիով, որ այլոց հետ լուսարարին գօտիէն կախուած էր, և մտք ըրի այն չարագործին գլուխը պատռել բանալիներուն խուրձովն, երբ կտոր մը քաքարի, և փոքրիկ շիշ մը

գինիի յիշատակն, որով իմ զերութիւնս սիրեր էր, իմ գութս շարժեցուստի մինակ քանի մ՝ուժգին կիցեր տալով. զանի գեղինը տասպրեցի. և երկու սրտակաւելի վանականոց ինջոյքը կաղմող ճաշէն կտոր մը միս և շիշ մը գինի շատ մը ճաշակելէն ետև՝ տխուր վազեցի և իմ յատուկ երիվարս դատայ, որ անտարակոյս վանահօր գործածութեան համար մէկդի գրուած էր։ Կարելի եղածին չափ երիվարը վազցնելով ատ հասայ, և ամէն մարդ՝ քանի կ՝յուսաջանայի, արտորնօք խոյս կ՝տային, կարծելով թէ ուրուական մ՝եմ, մանաւանդ սա պատճառաւ որ չյայտնուելու համար գէմքս կիսովին ծածկեր էի պատանքով։ Իմ գղեակս մտնելու չսիսի կարենայի անշուշտ եթէ գիս ձեռնածուին մէկ ընկերը չտեսէին, որ մեծ զաւիթը կ՝գտնուի և իրենց տիրոջը յուսարկաւորութեան համար դումարուած մարդիկը զուարճացընելու հնարը դիտէ։ Տեսուչը կարծեց թէ իմ հապուստս ձեռնածուին խմբին կ՝վերաբերի, այսպէս կարող եղայ ներս մտնել, և հաղիւ ժամանակ ունեցայ ինքզինքս մօրս յայտնելու և ձեզ, ազնիւ բարեկամդ իմ, գտնելու եկեղէն առաջ, պատառ մը բան ուտելու։

— Եւ գիս կ՝գտնես — ըսաւ Սէտրիկ — կազմ և պատրաստ պատուոյ և ազատութեան խորհուրդները վերստին սկսելու։ Ահա կ՝ըսեմ քեզ, երբէք սաքսօնեան ազնիւ ազգին ազատութեան տալի նպաստաւոր արև մը չսիսի ծագի։

— Ազատութեան վրայ մի խօսիր ինձ — պատասխանեց Ամէլստէն։ Հէրիք է որ ես ինքզինքս ազատեցի. ես տալի տրամադիր եմ անզգամ վանահայրը պատժելու։ Սա Գօնինկսպրրկի գղեկին գագաթը պիտի կախեմ զանի իր շուրջատով և պատմուճանով, և եթէ իր մեծ փորը նեղ սանդուղներէն անցնելու դժուարին լինի, ճախարակի մը միջոցաւ զանի դրսէն պիտի քաշել տամ։

— Բայց, որդեակ իմ — ըսաւ Էպիթ — չես մտածեր որ նուիրական կարգ ունի։

— Դու ալ մտածէ, մայր իմ, որ երեք օր ծոմ պահեցի — պատասխանեց Ամէլստէն։ — Կ՝ուզեմ որ ամենուն արիւնը խմեմ։ Գրօն—սը—Պէօ տալի թեթև յանցանքի մը համար այրեցաւ, վասն զի իր գերիներուն աղտոր սեղան կ՝պատրաստէր, մինակ իր վերջին թանին մէջ քիչ մը շատ խստոր կ՝գտնէր։ Բայց այս մեր կեղծաւոր, ապերախտ ստրուկներն, որ ստէպ իմ սեղանիս ինքնակոչ շողոմարար հիւրերն էին, որ ինձի ոչ թան տուին և ոչ խստոր, պիտի մեռնին, Հէնկիստի հոգւոյն վրայ կ՝երդնում։

— Բայց Պատն ինչպիսի՞ ըսէ, աղնիւ բարեկամս — հարցուց Սէտրիկ։

— Ոչ Պատ ոչ սատանայ մարիկ պիտի ընեմ — պատասխանեց Ա-թէլստէյն — պիտի սպասնեմ զանոնք։ Խօսքը կտրենք։ Եթէ աշխարհիս ամենէն ընտիր կրօնաւորներն իսկ լինին, աշխարհս կրնայ առանց անոնց քալել։

— Ամէն է, աղնիւ Ա-թէլստէյն — ըսաւ Սէտրիկ — մոռցիր այն պիսի թշուառներ քու առջևդ բացուած փառաց ասպարիզին մէջ։ Ըսէ սա նօրման իշխանին թէ՝ որչափ որ առիւծասիրտ է, Ալֆրէտի ա-թոռն առանց պայքարի չպիտի նստի, քանի որ սուրբ Խոստովանողին աղղատոհմէն մին ապրի իրեն դէմ մաքառելու համար։

— Ի՞նչ — դոչեց Ա-թէլստէյն — միթէ այս է Ռիչարտ աղնիւ իշխանը։

— Նոյն ինքն Ռիչարտ Բլանդաժնէդն է — պատասխանեց Սէտրիկ — բայց աւելորդ է յիշեցընել քեզ թէ, այս տեղ իբրև կամաւոր հիւր եկած լինելով, չենք կարող ոչ զինքը թշնամանել և ոչ գերել։ պարտքս կ'ճանչես իբրև հիւրընկալ։

— Անտարակոյս, հաւատս վկայ — ըսաւ Ա-թէլստէյն — դիտեմ նաև իմ պարտքս իբրև հպատակ մը։ վասն զի տհա իմ հաւատարմութեան նուէրս կ'յայտնեմ անոր, ինչպէս նաև սիրտս և սուրս։

— Որդեակ իմ — ըսաւ Էտիթ — մտածէ քու արքայական իրաւանցդ վրայ։

— Անկլիոյ աղատութեան վրայ խորհէ, անհարազատ իշխան — դոչեց Սէտրիկ։

— Հայր և բարեկամ — վրայ բերաւ Ա-թէլստէյն — այդ ձերյանդիմանութեանց վերջ տուէք։ Հայրը, ջուրն ու գնդանն հրաշալի դեղեր են փառասիրութեան դէմ, և դերեզմանէն աւելի իմաստուն մարդ մը վեր կ'ելնեմ քան որ էի իջնելու ատենս։ Այս յիմարական մտափառութեան մասն այն նենդամիտ Վոլֆրէմ վանահայրը թելադրեց ինձ, և կարող է այժմ դատելեթէ վստահութեան արժանի խորհրդատու մ'է։ Այս դաւադրութիւններն սկսելէն հետէ, ուրիշ բան չշահեցայ, բայց միայն արտորալի ուղևորութիւններ, տհաճութիւն, հարուած, ճնշում, բանտ և սով։ ասկից զատ՝ կ'նայիմ որ այս ամէնը պիտի դադրի հաղարաւոր հանդարտ մարդոց կատորածով։ Ահա կ'յայտնեմ ձեզ, ես իմ առանձին կալուածոցս մէջ թագաւոր պիտի լինիմ և ոչ այլուր։ և իմ իշխանութեանս առաջին գործը պիտի լինի վանահայրը կախել։

Խմբագիր—Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ